

9(47.925)

h-77

ԻՐԱՆԸ

ՆԻ

ՀԱՅՈՒԹԻՒՆԸ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ  
ՈՒՂՂՈՒԱԾ  
ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԹԵՄԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ

ԻՐԱՆԻ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ  
2500-ԱՄԵՍԱԿԻ ԱՌԹԻԻ

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ





**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ**  
**ԻՐԱՆԻ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ**  
**2500-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆՑ**  
**ԻՐԱՆԱ-ՀՆԳԿԱՍՏԱՆԻ ԹԵՄԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ**  
**ՑԱՆՁՆԱԽՄԲԻ**

«Այսպէս ասէ Տէր Աստուած  
Յօժեալն իւր Կիրոս  
...ես երթայց առաջի քո»:

**ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ**

«Երկնաւորք  
Գերազանց պատիւ շնորհեց Կիրոսին  
Նրան «օժեալ» անունը տալով»:

**ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ**

9.(47.925)

Խ - 11

9

ԻՐԱՆԸ

ԵՒ

ՀԱՅՈՒԹԻՒՆԸ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ  
ՈՒՂՂՈՒԱԾ  
ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԹԵՄԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ

ԻՐԱՆԻ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ  
2500-ԱՄԵՆԱԿԻ ԱՌԹԻԻ

Գ.ԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

490

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ  
ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ  
ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ  
ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ



խընթաց դէպք եղող եւ ապագայի համար հսկայ դեր ունենալու կոչուած Իրանի Կայսրութեան 2500-ամեակի տօնակատարութիւնը պիտի լինի մեզ համար մի խորապէս նշանակալից առիթ վերամտածելու մեր կեանքը, զայն աւելի երջանիկ եւ գեղեցիկ ընծայելու վնասկամ եւ աննահանջ տրամադրութեամբ:

Ոեւէ խօսք եւ ոեւէ գիրք իր իսկական արժէքը կ'ունենայ երբ լսուի եւ կարդացուի: Ինչպէս լոյսը լոյս է երբ աչքին հանդիպի, այնպէս եւ գիրքը իմաստ է երբ միտքին հանդիպի: Այլապէս գիրք ասուածը քուղի կոյտ է... Գրքից միտք տանող նախապահը ընթերցումի՛ կամուրջն է:

Մեր սրտի ցանկութիւնն է, որ մեր հաւատացեալները *ընթերցեն* այս «Շրջաբերական Թուղթ»ը եւ պայծառ մտքով ու առողջ նախանձախնդրութեամբ, քէ՛ անհատական եւ քէ՛ ազգային – եկեղեցական գծով վերամտածեն իրենց անելիքն ու լինելիքը այս բարեբաստիկ առիթով:


Որովհետեւ հաւատում ենք, որ նման ինքնագիտակցութիւնից, ինքնաճանաչումից ծնունդ են առնում մեծ գործերը:

ԾԱՆԻՐ ԶՔԵԶ...:

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
ԱՌԱԶՆՈՐԴ ԼԱՅՈՅ  
ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԹԵՄԻ

19 Սեպտեմբեր, 1971

Նոր-Ջուղա



ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

ՈՒՂՂԻԱՆ

ԻՐԱՆԱ – ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԹԵՄԻ ԼԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ  
ԻՐԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ, 2500-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ

Հաւատացեալ գաւակունք,

Ազնիւ հայրենակիցներ,

Բացառիկ խանդավառութեան, աննախընթաց ոգեւորութեան օրերի մէջ ենք ապրում այս ամիսներին, երբ ողջ Իրանեան հայրենիքը ցարդ չտեսնուած եռուն և բեղուն շարժումի մէջ է եւ ամէն կողմ, արեւելքից արեւմուտք եւ հիւսիսից հարաւ, այս օրհնեալ երկրի չորս ծագերին, կերպարանափոխման, պայծառակերպու – թեան տեսարաններ են պարզում մեր աչքերին: Մայրաքաղաք Թեհրանում թէ վարդանման Շիրազում, գունազեղ Իսֆահանում թէ հովասուն Թաւրիզում, ծովափնեայ հովոցներում թէ գիւղական շրջաններում –

ամենուրեք, գարնան մի շունչ է փչում հազարամեակներ թատերարեմ եզող Իրանեան հողի վրայ: Պողոտաներ են բացում, ճանապարհներ են կառուցում, դպրոցներ են հիմնում—մի խօսքով՝ կարծէք Իրանն ամբողջ դարձել է մի գործադաշտ (chantier) ճարտարաշինական, ճարտարարուեստական բազմապատկեալ աշխատանքների մի հսկայ, շէն հանդիսարան: Եռուզեռ է ամէն կողմ—տպարաններն անընդհատ ճոնչում են, գունազարդ հրատարակութիւններ սփռելով իրենց մամուլի թաւալումից. երաժշտական, գեղարուեստական հանդիսութիւններ են պատրաստում, տենդազին աշխատանքով: Մէն մի օրը կարծէք մի ամիս է դարձել, մէն մի ամիսը՝ մի տարի: Ոյժերը տասնապատկուել են, աշխատանքը խելայել ընթացքով առաջանում է ամէն կողմ: Մի համատարած ազգային նախանձախնդրութիւն պրկել է բոլոր Իրանցիների կամքերն ու սիրտերը. գլխերը ցերեկին է խառնուել. աշխատաւորները իրար են յաջորդում անընդմէջ շարունակականութեամբ. աշխատանքները կատարում են քսանչորս ժամ քսանչորս ժամի վրայ գնացող ութմով:

Ինչո՞ւ այս բացառիկ, աննախընթաց շարժումը:

Իրանը, որպէս կայսրութիւն, դարձել է 2500 տարեկան: Ահաւասիկ, 2500 տարիներից ի վեր, նա ապրում է որպէս մարդկային մի առանձնաշատուկ միաւոր, իր իւրաշատուկ ազգային ինքնութեան գիտակցութեամբը: Քայլել է խորզուբորտ ճանապարհներից, անցել է երբեմն փշոտ, փոշոտ, երբեմն վարդոտ, ծաղկոտ ուղիներից: Ունեցել է ելեւէջներ, մերթ բարձրանալով դադաթներ, մերթ ընկնելով խորխորատներ: Ունեցել է բարեկամներ, հանդիպել է թշնամիներ: Իր ինքնութիւնը դարերի ընթացքում արտայայտուել է այլազան կրօնական, լեզուական, մշակութային եղա-

նակներով, բայց միշտ մնացել է անխախտ, տոկուն, չէ՛ կորցրել իր իւրաշատուկ նկարագրի ամէնէն էական գրծերը, ամէնէն յատկանշական կողմերը: Իրանը եղել է ու մնացել միշտ եւ խորապէս Իրան: Ինչպէս Նորին Վեհափառութիւնը՝ Շահնշահ Արիամեհը ինք ընտրուել է արդէն «հակառակ բազմաթիւ կործանարար արշաւանքներին՝ գորս կրել եմ անցեալում, մեմ երբեմ չեմ կորցրել մեր ինքնութիւնը»:

Կիւրոս Մեծից սկսեալ, որի անունով նշուել է արդէն Իրանեան կայսրութեան Հիմնադրութեան Տօնակատարութեանց 2500—ամեակի այս տարին, մինչեւ այսօր երբ արեւափառ իշխում է մեր ամենասիրելի Վեհապետը՝ Մեծագոր Արքայից Արքայ Շահնշահ Արիամեհը, Իրանեան Հայրենիքը հակառակ ժամանակների վերլվայրումներին, յաջողել է իրազործել այնպիսի նուաճումներ, որոնք աւելի քան երկու հազարամեակների փառքն են կազմում, եւ որոնց մասին այնքա՛ն հատորներ են գրուել, այնքա՛ն ուսումնասիրութիւններ կատարուել, այնքա՛ն լեզուներով եւ այնքա՛ն մեծ թւով բազմազգի գիտնականների կողմից, որ եթէ մէկտեղւեն, կարող են ամբողջ մի մատենադարան լեցնել...: 2500—ամեակը, վստահաբար, նոր առիթ պիտի լինի նորանոր ուսումնասիրութիւններով առաւել եւս պայծառ լոյսին բերելու դարերի ժառանգութիւնը եզող այդ հոգեկան, իմացական, մշակութային, գեղարուեստական հարստութիւնը:

Նախապատմական ժամանակներից սկսած, բայց մասնաւորապէս իր ազգային ինքնուրոյն գոյաւորման օրերից, Աքեմենեան կայսրութեան փառաւոր շրջանից ասդին, Պարսկական, Պարթեւական, Սասանեան, Իսլամական յաջորդական հանգրուաններից անցած մինչև Սաֆաւեան իշխանութեան ժամանակները եւ Իրանը

դէպի առողջ ոգով արդիականացում եւ յառաջադիմութիւնն առաջնորդող Փահլաւի Գերդաստանի ներկայ երջանկաբեր դահակալութիւնը, հակառակ Սելջուկեան եւ Մոնկոլական եւ այլ տեսակի եւ ժամանակներին նուաճողական արշաւանքների յառաջ բերած տաղնապներին եւ աւերումներին, Իրանը միշտ յաջողել է իր մշակութային իրազործումներով իր բարձր դիրքը պահել համամարդկային քաղաքակրթութեան պատմութեան մէջ:

Ողջ Իրանին եւ նրա համայն ժողովրդի համար, 2500-ամեակը հաւաքական ինքնագիտակցութեան, համայնական ինքնանորոգարձումի, միասնական ինքնաճանաչման մի բարեբաստիկ առիթ է, որով այդ հսկայական եւ անսպառ հարստութիւնը պէտք է դառնայ ներշնչման աղբիւր, նո՛ր դրդիւ, նո՛ր մղում դէպի ապագայի նո՛ր, ու աւելի փառաւոր, նուաճումներ:

Պատմութեամբ հարուստ ժողովուրդները եթէ միայն հպարտանան իրենց անցեալով եւ դայն դրամագրւութի վերածած՝ ապրեն նրա դադափարովը-տեսակ մը տոկոսովը-, կարող են միայն տեղքայլ կատարել: Եւ սակայն, չմոռանանք, որ տեղքայլը, մասնաւորաբար այս արագօրէն զարգացող դարին, նշանակում է... նահանջ: Ինչպէս մի լիճ, որ իր մէջ նոր ջուր չ'ընդունիր՝ կա՛մ կը ցամաքի եւ կա՛մ կը դառնայ... ճահիճ: Անցեալը արժատ է եւ որքան արժատը խորն է եւ առողջ՝ այնքան եւ կանանչ եւ պտղալի կը լինի ծառը: Եւ ո՞վ չի ցանկանում ծառը միշտ պտղաբեր տեսնել, որպէսզի նա արդարացնի իր ծառի իսկական կոչումը, եւ մենք վայելենք նրա բարիքները:

Ահա թէ ինչու արդիականացման, զարգացման, յառաջադիմութեան կարիքը հրամայական պահանջ է մեր սիրելի Իրանի համար եւ որին սրտովին եւ եռան-

դուն ձեւով ու իմաստուն եւ հեռատես դադափարականներով նուիրուել է արդէն մեր սիրեցեալ Վեհապետը իր դահակալութեան օրից սողին, բայց մանաւանդ անցած տասնամեակի համեմատաբար խաղաղ շրջանում, հրակայական չարանիչով եւ բարձրարժէք որակով արդիական նուաճումներ կատարելով Իրանի մէջ: Նորին Վեհափառութիւն Շահնշահ Արիամեհը Իրանի պատմութեան մէջ դարագլուխ բացող եւ արդիական նուաճումների խթան հանդիսացող եւ ուղղութիւն տուող իր «Սպիտակ Յեղափոխութիւն» հատորում սքանչելի կերպով պարզել է արդէն իր լուսաւորեալ հայեացքները Իրանի զարգացման մասին: Իրանի պատմութեան մէջ ոսկի տառերով արձանագրուելու կոչուած այս ոսկեմատեանի ներածութեան մէջ նա ասում է.

«Եթէ մեր ազգը ցանկանում է իր գոյութիւնը պահել աշխարհի առոյգ, յառաջադէմ եւ ազատ ազգերի շրջանակում, չունի այլ անելիք բայց միայն ամբողջովին փոխել ընկերութեան հիմ եւ հնամենի կարգը եւ իր ապագան կառուցել մի նոր կարգի հիմունքի վրայ, որ լինի ներդաշնակ օրուան կարիքներին եւ հեռանկարներին»:

Եւ նա ճշտում է, որ այդ փոփոխութիւնը պիտի կատարուի պահպանելով Իրանեան հայրենիքի առանձնայատուկ ինքնութեան ոգին եւ նկարագիրը:

«Հինի տեղ մի նոր ընկերութիւն կառուցելու համար անհրաժեշտ էր գտնել այն նանապարհը, որ մեզ համար լինէր ամենէն օգտակարը եւ որ լինէր ներդաշնակ Պարսկական ոգու եւ նկարագրի, մեր երկրի կարիքներին, մեր աշխարհագրութեան և պատմութեան»:

Ինձ համար մեծ ուրախութիւն էր իմ ժողովրդին հոգեւոր ծառայութեան հրաւիրուել այսպիսի մի փառաւոր ժամանակ, երբ Իրանը ինչպէս ասում է մի հե-

դինակ, «յառաջադիմօրէն զարգացող մի երկիր է» դարձել եւ որի անունը շնորհիւ Շահնշահ Արիամեհի համաշխարհային բարձր վարկին եւ վայելած խորը յարգանքին, առաւել եւս հռչակուամ է աշխարհի չորս ծագերին:

Ճարտարարուեստական, շինարարական, դիտական մեծ նուաճումների լծուած Իրանեան Հայրենիքի ղեկավարները արթուն եւ յստակատես քաղաքականութեամբ ամենէն զօրաւոր շեշտ են դնում ժողովրդի կրթական եւ կենցաղային մակարդակի բարձրացման գործի վրայ: Աղքատութիւնը վերացնելու, գիւղացիական կեանքի պայմանները բարելաւելու, անգրագիտութիւնը ջնջելու, երկրի բոլոր բնական հարստութիւնները դիտական — տեխնիկական նոր միջոցներով եւ մեթոդներով առաւելագոյն չափով օգտագործելու, դպրոցական ուսման մակարդակը, տարրականի, միջնակարգի եւ համալսարանականի հանգրուանների վրայ հաւասարապէս բարձրացնելու ազգային բոլոր ձեռնարկութիւնները պարզապէս հիացումի առարկայ կարող են լինել բոլոր նրանց համար, որոնք մանաւանդ օտար երկրներից են գալիս:

Բայց զարգացում ասուած իրականութիւնը նիւթական պայմանների բարելաւման հարց չէ միայն: Այլ նաեւ, ու աւելին, մարդկային մտքի եւ հոգու մշակման, ազնուացման, քաղաքացիական դաստիարակութեան, մարդկային կեանքի այլազան արտայայտութիւնների ազնուացման խնդիր է դա:

Անցեալով հարուստ եւ փառաշուք, ներկայով գործօն եւ արագօրէն զարգացող եւ ապագային նոր բարձունքներ հասնելու կոչուած Իրանեան Հայրենիքը, սակայն, չի մոռացել եւ — ես հաւատում եմ — չի կարող մոռանալ, որ կրօնական վեհագոյն և բարոյական ազնուա-

ցուցիչ սկզբունքները խարխիսն են մարդկային ընկերութեան առողջ զարգացումին: Կրօնական հաւատքի, մարդկային ազատութեան, լայնախոհ կեցուածքի ըսկզբունքները մնում են հիմնական խարխիսները Իրանեան ազգային կեանքին, ինչպէս եղել են անցեալին անկի քան երկու հազար տարիներից ի վեր:

Ի՞նչ մեծ ուրախութիւն էր ինձ համար «Սպիտակ Յեղափոխութիւն» հատորում կարգալ այն տողերը, որոնց մէջ լուսամիտ Արքայից Արքան երկու սկզբունքներ է ճշտում որպէս հիմունքներ բարեկարգութեան եւ յառաջադիմութեան որեւէ շարժումի համար, որ կոչուած է լինելու առողջ եւ տեւական. —

Առաջինը հոգեւոր սկզբունքների եւ կրօնական հաւատալիքների անխախտ պահպանումն է. «Մեր ժողովուրդը եւ մեր ընկերութիւնը, — ասում է Արքայից Արքան, — ջերմեռանդօրէն կպուած են իրենց կրօնին եւ հաւատալիքներին, եւ կրօնի գերագանց ոչմարտութիւնըն է վարիչ ոյժը եւ հաստատուն ազդակը մեր բարոյական եւ հոգեւոր կարգին: Երկրորդը (երկրորդ սկզբունքը) անհատական եւ ընկերային ազատութիւնների պահպանումն է, եւ այս ազատութիւնների գորացումը որպէսզի նրանք դառնան աւելի զօրաւոր քան որեւէ ատեն ցարդ մեր պատմութեան մէջ»:

Ինքն է դարձեալ, որ խորապէս հաւատալով այս սկզբունքների գերագոյն արժէքին եւ անխոխարինելի կարեւորութեանը, աւելացնում է.

«Որքան էլ փայլուն լինի յառաջադիմութիւնը, մի ընկերութիւն, որ գուրկ է կրօնական հաւատալիքներից եւ անհատական ու ընկերային ազատութիւնների հոգեւոր սկզբունքներից, չի կարող լինել տեւական. դեռ անկի, նրա մէջ ո՛չ գրաւիչ ոյժ եւ ո՛չ էլ գեղեցկութիւն գոյութիւն ունի: Հոգեւոր արժէքների բացակայութիւնը

նը խոշոր խոչընդոտ է. մի խոչընդոտ՝ որը չպէտք է քոյլատրուի մի ընկերութեան համար»:

Ինչքան քաջալերական է 20-րդ դարի այս օրերին լսել մի պետութեան Վեհապետի, որ այսպիսի ուժեղ բառերով եւ ներքին վաւերական եւ ջերմ համոզումով է արտայայտուած կրօնական հաւատքի եւ բարոյական սկզբունքների սեպուհ կարեւորութեանը մասին արգի ընկերութեան զարգացման գործում: Երբ դարը այնպէս ապակրօն, եւ տեղ-տեղ հակակրօն, շարժումներով է առաջանում, նման մի հաւատաւոր ձայն կը նմանի ամպամած երկնքից յանկարծ շողացող արեւոտ մի ճառագայթի, որը կը ջերմացնի մարդու հոգին:

Մեզ համար, սակայն, լիովին հասկանալի է այս շեշտը Նորին Վեհափառութեան խօսքի մէջ, ոչ միայն նրա համար, որ նա անձնապէս այս համոզումների ապրումն ունի իր սրտում, այլ նաև նրա համար, որ Իրանը իր դարերի երկար գոյատեւման ընթացքում հանդիսացել է կրօնքի օրրան եւ ազատութեանց երկիր: Ահա թէ ինչու մեր ամենասիրելի Արքայի հոգու մէջ մենք տեսնում ենք կատարեալ մարմնացումը Իրանեան հարազատ ոգու (the genuine Iranian spirit):

Թող երկա՛ր ապրի նա եւ փառքո՛վ ապրեցնի իրեն վստահուած Իրանեան Հայրենիքը:

\* \* \*

Սիրելի եւ հաւատացեալ հայորդիք,

Մեր հայ ժողովրդի համար, Իրանեան Կայսրութեան 2500-ամեակի տօնակատարութիւնը ունի մասնաւոր նշանակութիւն: Պատմականօրէն, ո՛չ մի երկիր եւ ո՛չ մի ժողովուրդ այս աշխարհում աշխարհազրականօրէն ինչպէս եւ ցեղային, եւ ընկերային եւ այլ տեսակէտներից այնքան մօտ է եղել մեր Հայաստան աշխարհին եւ մեր Հայկազնեան ցեղին, որքան Իրանն ու Իրանցին: Նախնական ժամանակներից սկսած, բայց մանաւանդ Արիական ցեղի փոքր Ասիայում հաստատման ժամանակներից ասդին, շատ սերտ, շարունակական եւ անքակտելի յարաբերութեան մէջ են եղել Իրանցի եւ Հայ ժողովուրդները: Ո՞վ չի յիշեր Կիւրոս Մեծի եւ Հայոց թագաւորազն Տիգրանի եղբայրական աստիճանի հասնող բարեկամութիւնը, որ այնքան պերճախօս վիպականութիւն է եւ խորհրդանշական մեծ արժէք ներկայացնող երեւոյթ մասնաւորաբար այս օրերին, «Մեծն Կիւրոսի տարի» հռչակուած այս տարուայ համար \*):

Բնականօրէն, պատմութեան ընթացքում եղել են բախումներ երկու ժողովրդների միջեւ: Հայաստանը յաճախ մնացել է երկասյրի դրութեան մէջ Պարսկաստանի հանդէպ:

\*) Կարդացէ՛ք հռչակաւոր Յոյն պատմաբան Քսենոֆոնի (Xenophon) «ԿԻԻՐՈՊԱՏԻԱ» (Cyropaedia) գիրքը, որի մէջ պատկերացում եմ Կիւրոս Մեծի կեանքի այլազան դրուագները:

տանի եւ այլ կայսրութեանց միջեւ տեղի ունեցած շարունակական բախումների հետեւանքով, ինչպէս դիտել տուել է արդէն Շահնշահ Արիամեհը «Իմ հին եւ արդի Հայրենիք» գլուխի մէջ \*):

Բայց այդ բոլորով հանդերձ, թէ՛ ցեղային արեւնակցութեան, թէ՛ լեզուական հանդիտութիւնների եւ փոխ ազդեցութիւնների, թէ՛ մշակութային կապերի, թէ՛ ընկերային բարքերի եւ սովորութիւնների տեսակէտից, պատմականօրէն նկատի առնուած, շատ մօտիկ կապակցութիւններ են գոյութիւն ունեցել Իրանի եւ Հայաստանի ժողովրդների միջեւ:

Անկախաբար փոխ – յարաբերութիւնների այդ սերտութիւնից, երկա՛ր դարերով Հայեր ապրել են Պարսկաստանում: Յաճախակի պատերազմների հետեւանքով, Հայերը պարտադրաբար փոխադրուել են Պարսկաստան: Առանց յետ երթալու մինչեւ Սասանեան տիրապետութեան ժամանակները, պիտի ասել, որ պատմական յստակ յիշատակութիւններ ունենք Հայերի դէպի Պարսկաստան տեղափոխման մասին մասնաւորաբար 11-րդ դարից սկսած, երբ Սելջուկեան եւ ապա Մոնղոլական արշաւանքների հետեւանքով մեծ թւով Հայեր բռնութեամբ փոխադրուեցին Պարսկաստան եւ հաստատուեցին Թաւրիզում, Սուլթանիէում, Մարանդում, Խոյում, Սալմաստում, Մարաղայում, Ռեշտում, հարաւային Իրանում, Սպահանի մօտակայքում եւ այլ շրջաններում:

\*) Իր «Առաքելութիւն Իմ երկրի Համար» (Mission for my Country) հատորի այս առաջին գլխում, խօսելով Սասանեան եւ Հռոմէական կայսրութիւնների միջեւ տեղի ունեցող պատերազմների մասին, նա գրում է. «1-րդ դարում, Հայաստանը կռուականօր դարձաւ երկու կողմերի միջեւ: Ի վերջոյ երեք պետութիւններն էլ իրենք իրենց սպառեցին» (էջ 23):

Նոյնիսկ հիւսիսային շրջանում, Ատրպատականում, 12-րդ դարում յիշուած են երկու եպիսկոպոսներ Հեր եւ Ջաբեւանդ գաւառների, եւ «Սալմաստայ եւ դրանն Պարսից», որոնք մասնակցել են կաթողիկոսանիսա Հռոմկըլայ բերդում (Հայաստանի եւ Կիլիկիոյ միջեւ) դումարուած հայ եկեղեցական ժողովին, 1179 թուին: Բաղմաթիւ ձեռագրեր են գրուել 14-րդ դարում Թաւրիզի մէջ եւ հետագայ դարերում նաեւ այլ քաղաքներում, ինչպէս Սուլթանիէում, Մարաղայում, Սալմաստում եւ այլն:

Բնականօրէն, Շրջաբերական Թուղթի այս հակիրճ էջերում, կարելի չէ տալ ամբողջական պատմութիւնը Իրանում ապրած Հայ ժողովրդի կեանքի եւ գործերի: Ի՛նչ հետաքրքիր եւ մեծարժէք գործ կը լինէր եթէ մի երիտասարդ Իրանահայ դիտնական նուիրուէր այդպիսի երախտարժան մի աշխատութեան, սկզբնաղբիւրների հիման վրայ ուսումնասիրելու եւ պատկերացնելու համար այդ կեանքն ու գործը:

Բայց մեզ համար, Իրանա – Հնդկաստանի Թեմի սահմաններում, իւրայատուկ եւ մեծագոյն նշանակութիւն ունի 17-րդ դարի սկզբին կատարուած գաղթը Հայ ժողովրդին՝ դէպի հարաւային Իրան, ուր Շահ Աբրաս Մեծ կայսեր հրամանով բազմահազար Հայեր բերուեցին և հաստատուեցին Իրանի այդ ժամանակի մայրաքաղաք Սպահանի կողքին, Չայանդերուդ գետի հարաւակողմը, և այստեղ կառուցեցին մի նոր քաղաք, որ կոչուեց ՆՈՒՂԱ: Ժողովրդի կարևոր հատուածներ հաստատուեցին մայրաքաղաքից հեռու գաւառական – դիւղական շրջաններում, ինչպէս Փերիայում, Չհարմահալում, եւ Պարսկաստանի այլ քաղաքներում, ինչպէս Շիրազում եւ այլ վայրերում:

Ժամանակակից աղբիւրներ վկայում են, որ 17-րդ դարից առաջ, Սպահանում եղել են Հայեր, որոնք Շահ

Արքայացի առաջ հաստատուած են եղել այստեղ խոյս ար-  
ւած լինելով Հայաստանի Թուրք - Օսմանեան բռնակա-  
լութեան կեղեքումներից: Բայց 17-րդ դարում Հայ հա-  
մայնքը Նոր-Ջուղայում ապրել է իր կեանքի ամենից  
բեղուն եւ բարգաւաճ շրջանը, մասնաւորաբար Շահ Ար-  
բասի եւ նրա անմիջական յաջորդների ստեղծած թոյլա-  
տու եւ նպաստաւոր պայմաններում:

Բացայայտ իրողութիւն է, որ հայ մեծահարուստ  
վաճառականներ Եւրոպայի եւ Մայրադոյն Արեւել-  
քի միջեւ հսկայ դեր են կատարել եւ խոշոր նը-  
պաստ բերել Պարսկաստանի բարգաւաճման եւ յառա-  
ջագիծութեան մարզում: Ինչպէս վկայում են ժամանա-  
կակից աղբիւրները, մասնաւորաբար 17-րդ դարի օտար  
ուղեգիրները, Նոր-Ջուղայի Հայերը եղել են դործունե-  
եայ եւ արդիւնաշատ անձինք մասնաւորաբար արտաքին  
վաճառականութեան մարզում: «Կարն ժամանակում, -  
գրում է 17-րդ դարի Փրանսացի հռչականուն ուղեգիր  
Տալերնիէն, այս ժողովուրդը (Հայերը) դարձան այնպէս  
մասնագէտ, որ չկայ ոեւէ մի տեսակ վաճառականու-  
թիւն, որը նրանք չձեռնարկեն. այժմ գնում են այնքան  
հեռու տեղեր ինչպէս Թոնիֆին, շավա եւ Ֆիլիպպեան  
կղզիներ, արդարեւ ամբողջ Արեւելք, բացի Չինաստա-  
նից եւ շապոնիայից» \*):

Ռուսաստանի եւ Կենտրոնական Եւրոպայի գրեթէ  
բոլոր երկրների հետ նրանք վաճառականական կապեր  
են հաստատել:

Արհեստագիտական մարզերում եւս նրանք իրենց  
ձեռներէջ ոգով եւ ճարտար աշխատանքներով մեծ յաջո-


\*) Մեջբերուած John Carswell-ի կողմից: Տե՛ս New  
Julfa - The Armenian Churches, էջ 4, Clarendon  
Press - Oxford, 1968:

ղութիւններ են արձանագրում մասնաւորաբար ոսկեր-  
չական եւ մետաքսադործական արհեստներում:

Բայց այս բոլորի հետ միասին, Նոր-Ջուղայում  
հաստատուած Հայ ժողովուրդը իր հոգեւոր եւ իմացա-  
կան կարիքների համար կառուցեց բազմաթիւ եկեղեցի-  
ներ եւ հիմնեց մի վանք, Ս. Ամենափրկիչ անունով, որը  
յաջորդ դարերի ընթացքում, եւ մինչեւ այսօր, եղաւ  
Նոր-Ջուղայի եւ որոշ իմաստով ու որոշ չափով նաեւ  
ողջ Պարսկահայութեան մշակութային կենտրոնը: Մաս-  
նաւորաբար 17-րդ դարում, նա հասաւ ամենաբարձր  
մակարդակի: Այս դարի հայ ընդհանուր վերածնութեան  
չարժումի մէջ առանձնապատուկ տեղ եւ դեր ունի Նոր-  
Ջուղայի դպրոցը, որի հիմնադիրը եւ ղեկավար դէմքը  
հանդիսացաւ Խաչատուր վրդ. Կեսարացին: Նրա շուրջ  
բոլորուեցին միաբան վարդապետներ եւ արեղաներ: Նա  
գրադրում էր ոչ միայն Ս. Գրքի եւ զուտ Աստուածա-  
բանական նիւթերի ուսումնասիրութեամբ եւ ուսու-  
ցումով, այլ եւ գիտական եւ փիլիսոփայական նիւթե-  
րի դասաւանդումով: Իր օրով, Ս. Ամենափրկիչ վան-  
քը դարձաւ մի այնպիսի բեղուն ուսումնական կենտ-  
րոն, որ նկատուեց «Համալսարան», ինչպէս գրում է  
այդ դպրոցի աշակերտներից եւ 18-րդ դարի հեղինակ  
Խաչատուր Ջուղայեցին: Ոսկեղէն տողերով, գերզմայլ  
ապրումներով նա նկարագրում է Խաչատուր Կեսարա-  
ցու բազմարժէք ուսումնական եւ ուսուցողական դոր-  
ծը, ասելով. -

«Սա համալսարան կազմակերպեց, ուր դեռահաս  
աշակերտներին ուսուցանում էր եւ մարզում Հին եւ  
Նոր Կտակարանների գիտութեամբ, ազատական բոլոր  
գիտութիւններով եւ գերբնագանցականներով (այսինքն՝  
զուտ փիլիսոփայական ուսումներով): Ուստի պատշաճ  
է մեզ համար սրան կոչել բոլորին հայր եւ Արամեան ազ-

գի անմահութեան, վայելչութեան, եւ պայծառութեան արմատ: Որովհետեւ, նրա աշակերտների միջոցաւ ոչ միայն Նոր-Ջուղան այլեւ ամբողջ Հայաստան աշխարհը լուսաւորուելով պայծառացաւ: Նրա շնորհիւ անգիտութեան մշտապատում եւ միգամած խաւարն, ինչպէս արեգակնափայլ նառագայթներից, տարտղնուեց եւ հալածուեց հայոց ազգիցս, որ վերստին նորոգուեց եւ շքեղ գիտութեամբ մեծապէս նոխացաւ, ինչպէս հին ատեն պատահել էր շնորհիւ երանելի եւ աստուածաշնորհ մեր Թարգմանիչներին՝ Սահակի եւ Մեսրոպի եւ նրանց այլ աշակերտներին \*):



Ս. Ամենափրկիչ վանքի  
Մայր եկեղեցին

\*) ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՂ. ԶՈՒՂԱՅԵՑԻ, Պատմութիւն Պարսից, էջ 116—117, Վաղարշապատ, 1905:

Այսքան շքեղ գովեստներից եւ նրա գործի բարձր արժէքաւորումից յետոյ, Սաչատուր Զուղայեցին յիշում է մի շարք աշակերտներ, որոնք նշանաւոր են հանդիսացել Հայ եկեղեցու եւ մշակոյթի պատմութեան մէջ: Սրանցից առանձնապէս յիշատակութեան արժանի են Յակոբ Զուղայեցին, որ ապա եղաւ Կաթողիկոս Հայոց, Ս. Էջմիածնում (1655—1580), Դաւիթ Եպիսկոպոսը, որ հանդիսացաւ բաղմերախա Առաջնորդը Նոր-Ջուղայի, որի օրով կառուցուեց յատկապէս Ս. Ամենափրկիչ վանքի գեղանկար Մայր Տաճարը, Սիմէոն «Ներքամիտ եւ քաջ հոհտոր վարդապետը», որ ոչ միայն հմուտ էր աստուածաշնչական եւ աստուածարանական ուսումներին, այլ նաեւ ազատական, այսինքն աշխարհիկ գիտութիւններին, «Արտափին ուսումնաբան» անուան տակ ծանօթ գիտական փիլիսոփայական ուսումներին, և որ հեղինակեց այնպիսի գործեր, ինչպէս «Քերականութիւն» եւ «Տրամաբանութիւն», իր նիւթերը քաղելով «գեռամեծար փիլիսոփայ» Արիստոտէլի գիրքերից \*):

Արիստոտէլ Նոր - Զուղայում 17-րդ դարում...: Ի՛նչ թելադրական պերճախօս վկայութիւն՝ մեր ժողովրդի այդ օրերի իմացական ճաշակի եւ հասկացողութեան մասին:

Ծանօթ է հայ ձեռագրական պատմութեան մէջ թէ ի՛նչ բեղուն դպրոց է եղել Ս. Ամենափրկիչ վանքը Նոր-Զուղայում: Այստեղ հարիւրաւոր հայ գրչագիրներ են գրուել, ծաղկուել (մանրանկարուել) և ոսկուել, ու կաշեպատ, արծաթապատ կողքերով կաղմուել: Հայ վար-

\*) Տե՛ս վերջերս Հայաստանում հրատարակուած ուսումնասիրական լոյս տեսած մեկնագրութիւնը Հր. Միրզոյեանի, ՍԻՄԵՈՆ ԶՈՒՂԱՅԵՑԻ խորագրով: Երեսնի Համալսարանի կողմից, Երևան, 1971, էջ 233:

դապեաններն այստեղ

«Մի կուսմ ջրով, մի նշխարով եւ տփնութեամբ գիշերն  
անփուն

Պատմութիւնը մեր գրեցին մագաղաթի վրայ տժգոյն»:  
(Ա.Ի.ԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ)

Ինչ յուզիչ է կարգաւ յիշատակարանները Նոր-Ջուղայում գրուած ձեռագիրներին, որոնց մէջ այնքան քիչ բառերով բայց պերճաբարառ լեզուով խօսում է հայ ստեղծագործ ոգին: Այն ի՞նչ ոյժ է, դադափարական եւ զգացական ի՞նչ թելադրանքներից եկող մղում, որ մի Յակոբ Երէց, 1607 թուին, Հին Ջուղայից տարագիր, ընչազուրկ վիճակով հասած Սպահան, յոգնարեկ եւ տառապանքի տակ ճնշուած ծաղկում է մի հրաշալի Աւետարան «ի դառն եւ ի մրուր տրտմակիր ժամանակիս», ինչպէս ինքն է ասում, ապրելով անորոշութեան մաշող վիճակում, լինելով, «տարակուս եւ սրտաբեկ, քէ գինչ լինիցի վերջն» \*): Հայ մարդը ե՞րբ գրիչն է թողել, ե՞րբ գրելով ու գրականութեամբ, արուեստով ու միաքի այլ բարձր աշխատանքներով չէ զբաղուել: Միայն ա՛յն ատեն թողել է գրիչը, երբ... ձեռքն են կտարել: Միայն ա՛յն ատեն լռել՝ երգելուց, երբ... շունչն են մարել: Միայն ա՛յն ատեն գիրը կորսուել է աչքերից, երբ... խափաներ են լոյսը բիրերից: Ա՛յն ատեն միայն դադարել է հողից ու քարից տաճար կառուցելուց ու կեանք ստեղծելուց, երբ իրեն են վերածել... հողի: Հո՛ն, ուր ապրել է հայը՝ այնտեղ է եղել ստեղծագործութեան շունչը: Երբ ապրել է հայը՝ կեանքը լցուել է

\*) Տե՛ս Ձեռագիր քիւ 396, Կրեւ 247, Ս. Տէր - Աւետիսեանի Յուցակ Ձեռագրաց Նոր-Ջուղայի, Ա. հատոր, էջ 149, Վիեննա, 1970:

միայն ստեղծագործութեամբ: Այս ճշմարտութեանն է վկայում ահա մեր սիրելի Նոր-Ջուղան իր շուրջ չորս դարեան պատմութեան ամենիմաստ լեզուովը:

Այստեղ չէ՞ր որ վայտից ու երկաթից մամուլ ու կաղապար կոփեց ու կուց հայ վարդապետը: Այստեղ չէ՞ր որ նա թուղթ ու թանաք սարքեց և ստեղծեց առաջին հայ ինքնահնար տպարանը և տպագրական արուեստի հրաշագործ զօրութեամբը լոյս ցանեց հայ ժողովրդի կեանքի անդաստանում: Կարո՞ղ էք մի պահ երեւակայել հէնց մեր Նոր-Ջուղայի վանքը, որ եռուն մի աշխատանոց էր այդ դարում, մի մարդկային մեղուանոց, ուր բազմաթիւ վարդապետներ լծուել էին ժողովրդական լուսաւորութեան սուրբ գործին: Խաչատուր Կեսարացի վարդապետի հոգեւորական եւ մշակութային ճարտարապետութեան ներքեւ գործում էին բոլորն անխրախ, ինչպէս ինքն է ասում իր տպած «Հարանց Վարժ»ի ընդարձակ եւ այնքան յուզիչ յիշատակարանի մէջ, «Մին քուղք էր պատրաստում, որովհետեւ քուղքը տեղւոյն վրայ շինեցինք, մին գիրերն էր շարում, միւսը՝ սրբագրում, եւ ուրիշները՝ այլ գործերով պարապում \*): Օրհնեա՛լ աշխատանք, համախումբ գործ, միասնական ոգի: Ոչնչից տպարան յորինել, թուղթ շինել, հսկայ գիրք տպել 17-րդ դարի քառասնական թուականներին, այդ օրերի լուսաւորեալ երկիր՝ Եւրոպայից այսքան հեռու միջավայրում-սա հերոսակա՛ն գործ էր: Դա չի բացատրուիր միայն օրուայ մարդերի հանձարով, այլ մանաւանդ նրանց դէպի ժողովրդի լուսաւորութիւնը ունեցած խորը նախանձախրնդրութեամբ, մի տեսակ սրբազան կիրքով, պաշտամունքի աստիճանին հասնող սիրով եւ նուիրուածու-

\*) Վարք Հարանց, էջ 26 (705), Նոր-Ջուղա, 1461:

Թեամբ:

Չպէտք է մոռանալ, սիրելիք, որ նոյն այս մեր Նոր-Ջուղայի համեստ պայմանների տակ ապրող վանականների կողմից, 17-րդ դարի ճիշտ կէսին, ձեռնարկուեց առաջին անգամ Աստուածաշունչ մատեանը լրիւ բնագրով տպագրելու հսկայական գործին: Առաջին պրակների տպագրութիւնից յետոյ, սակայն, նըկատուեց որ տեխնիկական միջոցներն անբաւարար էին նման մի բարդ եւ ծաւալուն գործ ի գլուխ հանելու համար: Գործը կէս մնաց, բայց գաղափարն էր, որ տարւեց մինչեւ Ս. Էջմիածին, ուր Նոր-Ջուղայեցի Յակոբ Կաթողիկոսի օրով, դարձեալ Նոր-Ջուղայեցի Ոսկան վարդապետ Երեւանցին, մինչեւ Ամստերդամ երթալով յաջողեց այդ մեծ եւ երախտարժան գործը ի կատար ածել Նոր-Ջուղայեցի վաճառականների անմիջական եւ անվերապահ օժանդակութեան շնորհիւ: Դա 1666 թուին տպուած Աստուածաշունչ մատեանն է, որ հայկական տրպագրութեան գլուխ-գործոցն է համարուել միշտ \*):

Չպիտի մոռանալ, որ Նոր-Ջուղայի գաղտնի ծառայութիւնը հայկական տպագրութեան, շատ աւելի մեծ տարողութիւն եւ ծաւալ ունի քան այն ինչ կատարուել է միայն Նոր-Ջուղայում: Նոր-Ջուղայեցի առեւտրականներ շատ են սատարել հայ տպագրութեան գործին Եւրոպայում: Հին Ջուղայից ժառանգուած առեւտրական յարաբերութիւնները Եւրոպայի հետ մեծապէս

\*) Հետաքրքիր երևոյթ է անդրադառնալ որ հայ առաջին տպագրիչը՝ Յակոբ անուսով ծանօթ եւ «Մեղապարտ Յակոբ» մակդիրով հռչակուած, որ Վեներտիկում տպել է առաջին հայ գիրքը, «Պարզատումարը» 1512 թուին, եղել է Ջուղայեցի, Արաֆսի միւս ամից: (Տե՛ս, ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆ, «Հայ Գիրքը եւ Տրպագրութեան Արուեստը», էջ 50-53, Երեւան, 1958:

օգտակար դեր են կատարել մշակութային մարզում:

Նոյն այդ առեւտրական յարաբերութիւնները մեծապէս նպաստել են մասնաւորաբար Նոր-Ջուղայում նկարչական արուեստը զարգացնելու տեսակէտից:

Հայ մեծահարուստ եւ յաւէտ օրհնեալ «խօջա»ները, ոչ միայն նիւթով են զբաղուել, սոսկ հարստութիւն են դիզել, այլ հսկայ դեր են խաղացել Եւրոպական մշակոյթի հետ յարաբերութեան մէջ դնելով Պարսկահայ իրենց ժողովուրդը: Եւրոպայից արուեստագիտական, գեղագիտական ճաշակ են իւրացրել եւ նկարագրուել տուել Պարսկական պալատների հետ միասին իրենց հոգեւոր տները՝ հայկական եկեղեցիները, որոնք մինչև այսօր էլ հիացումի առարկայ են բազմահազար օտար եւ հայ այցելուներին: Մեկենաս են հանդիսացել իրենց ցեղակից հայազգի նկարիչներին եւ շքեղօրէն զարդանկարել են տուել հայոց տաճարները: Կարելի՞ է մոռանալ գրեթէ «անանուն» Մինաս Նկարիչին ու Յովհաննէս Մըրֆուզ «Տիեզերալոյս» վարդապետին:

Երբ մարդ մտնում է Ս. Ամենափրկիչ վանքի մայր տաճարի մէջ, սիրտը լցում է, աչքերի հետ միասին, աստուածային ներգոր խորհրդովը, գերմարդկային աշխարհի ներկայութեան զգացումովը: Եւ այդ հրաշագեղ տաճարի մէջ, յանկարծ, մարդ խոնարհում է աննշան մէկ կէտում, վանական ամենէն քաղցր եւ պաշտելի խոնարհութեամբ ու պարզութեամբ, ըստ տեղական սիրուն աւանդութեան, իր կնիքը դրոշմած «ըսքանչելի», «գերահռչակ», «տիեզերալոյս» բառերով պանծացուած Յովհաննէս Մըրֆուզ վարդապետի վեղարածածուկ եւ սեւազգեստիկ փոքր պատկերի առաջ: Երբ մարդ այցելում է Ս. Բեթղեհէմի եկեղեցին, կարծես հոգին վերթելում է դէպի երկնանման գմբէթ եւ առինքնում է ամբողջութեամբ մինչև որ աչքերը տա-

կաւ առ տակաւ իջնեն ցած դէպի Ս. Սեղանը, որի շուրջ յանկարծ Հայկական ձեռագրերի մանրանկարներում ծաղկուած սրբազան դէմքերը պատի վրայ առաւել շքեղացած հիացումի նոր առիթ եւ զրգիւռ են տալիս իր հոգուն:


Ո՛հ, ի՛նչ հրաշագիծ եւ սքանչելագոյն վրձին, որ գիտէ գիծն ու գոյնը այնպէս եղբայրացնել, որ մարդկային հոգին կը դադարի գիծ ու գոյն տեսնելուց, եւ կը տեսնի կեանքով բարախուն եւ անմահ դէմքեր:

Արուեստի «Բափօր լեռ»ներ են այս տաճարները բոլոր նրանց համար, որոնք գիտեն յամենալ այնտեղ և իրենց հոգւոյ աչքերը յառած պահել սառած բայց չմեռած գոյներին եւ գիծերին...:

Այո՛, հաւատացեա՛լ սիրելիք, այսպէ՛ս ծնուեց, այսպէ՛ս սնուեց, այսպէ՛ս ապրեց Հայոց Նոր-Ջուղան-Աստուծոյ հոգւոյն միւռոնովը օծուած մարդկային միտքի եւ արուեստի աւազանի մէջ հրաշակերպող մը-կըրտութեամբը հայ հոգուն:

Հակառակ այն դառն ու սառն իրողութեանը, որ հետագայ դարերում բազմատեսակ տառապանքների միջից քայլեց մեր ժողովուրդն այստեղ, Աղուանների արշաւանքների եւ յարձակումների եւ նեղմիտ ու կիղեքող խաների ճնշումների եւ բռնութիւնների հետեւանքով, նա շարունակեց ստեղծագործել: Նեղութիւնները, տառապանքները ժամանակաւոր ամպեր էին, որոնք եկան ու անցան ամպի նման...: Իրանեան ազատախոհ ոգին միշտ էլ յաղթող հանդիսացաւ եւ հայ ժողովուրդն այստեղ շարունակեց իր ստեղծագործական կեանքը, դպրոցներ բանալով, սպազբական հրատարակութիւններ կատարելով եւ միշտ հաւատարիմ մնալով իր շինարար ոգուն: Երբ Նոր-Ջուղայեցի հայը հարկադրուեցաւ Հնդկաստան, Ճափա, Ինդոնեզիա,

Բրմաստան՝ և Մայր. Արեւելքի այլ երկրներ գաղթել, երբե՛ք չմոռացաւ իր սիրելի Նոր-Ջուղան եւ իր շօշափելի մասնակցութիւնը բերեց, որպէսզի լոյսը չմարի լուսածնունդ Նոր-Ջուղայում: Դպրոցներ բացուեցին այստեղ-Քանանեան, Կենտրոնական-, զարգացեալ քահանայից սերունդ պատրաստուեց, մշակութային, բարեսիրական կազմակերպութիւններ ծնունդ առին, մէկ խօսքով՝ կեանքը շարունակեց ժամանակների զարգացման կշռոյթի համաձայն քայլել:



\* \* \*

Այժմ մենք 20-րդ դարի այս եօթներորդ տասնամեակում, ապրում ենք մեր կեանքի ամենէն խաղաղ շրջաններից մէկում: Չպէտք է մոռանալ որ փոթորիկների միջից, յաճախ կրակների միջից անցած Իրանը այժմ վայելում է մի կատարելապէս խաղաղ եւ հաստատուն շրջան: Մինչ Միջին Արեւելքի, Ծայրագոյն Արեւելքի եւ այլ երկրամասերում տեղ-տեղ խռովութիւններ, տեղական բնոյթ կրող նոյնիսկ պատերազմներ են տեղի ունենում (Աստուած տա՛յ որ շուտ վերջ գտնեն բոլոր խռովութիւններն ու բախումները աշխարհի սեւէ մէկ անկիւնում) փա՛ռք Աստուծոյ եւ պատի՛ւ Իրանեան Հայրենիքի ղեկավարներին եւ յատկապէս շնորհիւ Շահրնշահ Արիամեհի լայնախոհ, արդարակորով եւ իմաստուն առաջնորդութեանը՝ Իրանը մանաւանդ վերջին տասնամեակում յառաջանում է կատարելապէս խաղաղ պայմանների տակ եւ արագ բայց տոկուն քայլերով:

Մեր ժողովուրդն ամենուրեք, եւ իմ խօսքը մասնաւորելով մեր Թեմի հաւատացեալներին՝ Նոր-Ջուղայում, Փերիայում, Ահւազում, Աբաղանում, Խորրամշահում, Մասչէղ-Սուլէյմանում, Աղաջարիում, Անդիմեշիում, Շիրազում, պէտք է ոչ միայն քայլ պահեն զարգացման դնացքի հետ, այլեւ իրենց հայրերի օրինակով, գործօն եւ նշանակալի դեր կատարեն զարգացման ընթացքի համատարած շարժումի մէջ:

Միշտ ասել ու գրել եմ, յաճախ քարոզել եմ եկեղեցիներում եւ դասախօսել բեմերից որ չի՛ բաւեր, սիւա՛լ

է միայն անցեալին յառած պահել աչքերը: Պէտք է նայել դէպի ապագայ: Աւանդութիւնը գեղեցիկ բան է, բայց եթէ մնայ սոսկ աւանդապահութիւն՝ այն ատեն կը դառնայ մի տեսակ բանտ ու շղթայ որ կը կաշկանդէ մեր ճիգերը, կը ջլատէ մեր ոյժերը, կը թուլացնէ մեր կամքերը:

Մի քիչ վերը, այս Շրջարեւրական Թուղթի մէջ, դուք կարդացիք թէ ինչ էր պատգամել այս երկրի վեհապետը: Նա ասել էր, որ «Եթէ մեր ազգը ցանկանում է իր գոյութիւնը պահել աշխարհի առոյգ, յառաջադէմ եւ ազատ ազգերի շրջանակում, չունի այլ անելիք բայց միայն ամբողջութեամբ փոխել ընկերութեան հին եւ հնամենի կարգը եւ իր ապագան կառուցել մի նոր կարգի հիմունքի վրայ, որ լինի ներդաշնակ օրուայ կարիքներին եւ հեռանկարներին»:

Այսպէս, դէպի ապագայ ուղղուած մեր հայեացքի առաջ, ինձ համար պարզուում են գործունէութեան չորս գլխաւոր ուղիներ, անելիքների չորս կենսական ուղղութիւններ.

Ա.

ՈՅԺ ՏԱԼ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀՈԳԵՒՈՐ—ԿՐՕՆԱԿԱՆ  
ԿԵԱՆՔԻ ՄՇԱԿՈՒՄԻՆ

Հակառակ այն իրողութեան որ առհասարակ 20-րդ դարը ներկայացում է որպէս զուտ գիտութեան դար, սպաւրթն կեանքի մի շրջան, ճշմարտութիւնը այն է, սակայն, որ շատ տեղերում այսօր կրօնական վերադարձի թօնքի շօշափելի երեւոյթներ են պարզուում: Մասնաւորաբար համաշխարհային երկրորդ պատերազմից յետոյ, մարդկութեան կրած խորունկ ցնցումի յառաջ բերած ինքնագիտակցութեան շնորհիւ, մարդիկ անդրադարձան որ առանց կրօնական զգացումի, առանց Աստուծոյ ներկայութեան գիտակցութեան, առանց հոգեւոր-բարոյական ճշմարտութիւնների եւ սկզբունքների կիրարկումին՝ մարդ ի վերջոյ կրնայ դառնալ զազանական կիրքերի տէր մի էակ եւ՝ ինք իրեն մեծագոյն թշնամին: Ներկայումս, Ամերիկայում, Եւրոպայում եւ այլ յառաջադէմ նկատուած երկրներում, այնքա՛ն յատկանշական երեւոյթներ են պարզուում կրօնական վերաթնութեան տեսակէտից, որ Արեւմտեան աշխարհը եւ քաղաքակրթութիւնը երեւակայել որպէս անկրօն կամ հակակրօն մի աշխարհ եւ կեանք, դա ճիշտ չէ՛, դա պարզապէս խարկանք է եւ կարող է միայն մեզ վնասել: Արդարեւ, եկեղեցիները Արեւմուտքում գործունէութեան մի եռուն եւ բազմարդիւն ընթացքի մէջ են մտել: Փոխա-

դարձ մերձեցումի, համերաշխ գործակցութեան միասնական ճիգեր են ի գործ դնում հակառակ դաւանաբանական, ծիսական, ազգային եւ այլ կարգի տարբերութիւններին եւ երբեմն նոյնիսկ հակադրութիւնների: Հոգեւորական պետեր, եկեղեցական բարձրաստիճան ներկայացուցիչներ իրար են այցելում, հանդիպումներ են ունենում, հոգեւորականներ եւ աշխարհականներ ժողովներ են գումարում, համագումարներ կազմակերպում, խորհրդակցութիւններ կատարում, միասնական գործեր են ծրագրում, աղքատութեան, անդրագիտութեան, ընկերային հազարումի չարիքների դէմ հասարակաց, գործակցական հսկայ աշխատանքներ են կատարում՝ ի խնդիր մարդկութեան բարիքին, սիրոյ եւ եղբայրութեան յաղթանակին, Աստուծոյ թաղաւորութեան տարածումին եւ զօրացումին: Կաթոլիկ, Օրթոտոքս, Անկլիքան, Բողոքական եկեղեցիներ հակառակ դարերի իրենց հակամարտութիւններին, անիմաստ մըրցակցութիւններին, փոխադարձ չէզոքացումի ջանքերին, այժմ քով-քովի են գալիս եւ գործում են միասնաբար: Էկիւմենիք - Ecumenical - (Տիեզերական Միութեան) գաղափարն ու շարժումը օրից օր աւելի են զօրանում: Սա քսաներորդ դարի ամենէն յատկանշական եւ դրական ու յուսադրիչ երեւոյթներից մէկն է համամարդկային չափանիշով:

Բայց մենք առհասարակ անձանօթ ենք այս շարժումներին գլխաւորաբար այն պատճառով, որ չենք հետեւում օտար, բարձր որակի, լուրջ մամուլին, և նեղ իմաստով աշխարհիկ մամուլում էլ նման շարժումներ արձագանգ չունեն ընդհանրապէս: Վատիկանն անգամ, որ պահպանողականութեան միջնաբերդն էր համարւում, հիմնական փոփոխութիւնների ենթարկուեց: Վերադարձի շարժում կայ նոյնիսկ այն երկրներում,

ուր բունատիրական վարչակարգի տակ հակահրօն պայ-  
քար ու հալածանք տեղի ունեցան, եկեղեցիներ յարգա-  
նոցի, շտեմարանի ու սինեմայի վերածուեցին, հոգեւո-  
րականներ բանտարկուեցին եւ սպանուեցին, դպրեւան-  
քեր փակուեցին, հրատարակութիւններ խափանուեցին  
եւ մի պահ կարծուեց որ քրիստոնէական կրօնքը իր Հիմ-  
նադրին նման գերեզմանուեց: Այսպէս, Սովետ Միու-  
թեան կամ այլ նման վարչակարգի տակ գտնուող եր-  
կրներում այսօր նկատում ենք կրօնական արթնութեան  
յայտնի նշաններ:

Իսկ մեր ժողովրդի պարագային, կրօնը միշտ ունե-  
ցել է, եւ այսօր էլ ունի, իր բարձր գիրքը եւ վճռական  
դերակատարութիւնը: Մեր հոգու ծննդավայրը, ինչ-  
պէս ասում է բանաստեղծ Վահան Թէքէեան, մեր եկե-  
ղեցի'ն է: Մեր հոգեկան ապրումների սննդատու ներ-  
շնչարանն է նա, որի տիրական ներկայութիւնը այն-  
քան շեշտակի ձեւով ենք տեսնում մենք այստեղ, Նոր-  
Ջուղայի մէջ, իր աւելի քան երկոտասնեակ եկեղեցիներ-  
ի աւանդութեամբ եւ այժմ տասներկու եկեղեցիների  
ներկայութեամբ:

Ես պէտք չունեմ այստեղ բացատրելու ձեզի քրիս-  
տոնէական հաւատքի հացի չափ կենսական կարեւորու-  
թիւնը մեր հայկական կեանքի շրջագծի մէջ: Այդ մասին  
երկար գրել եմ «Ի հորոց Արտի հօսֆ Ընդ ժողովրդեան»  
գրքոյկում, եւ յաճախ խօսել՝ եկեղեցիների սրբազան  
բեմերից:

Կարեւորը այսօրայ մեր անելիքն է: Կրօնական ըզ-  
գացումները, քրիստոնէական կեանքի հիմնական սկզբ-  
բունքները պէտք է գործնական արտայայտութիւն գրա-  
նեն մեր աւօրեայ կենցաղի մէջ: Դուք կարդացիք թէ՛  
վերեւ թէ՛ ինչ ուժեղ շեշտ էր դնում Արքայից Արքան՝  
կրօնական հաւատարմութեան կարեւորութեանը վրայ Ի-

բանեան ընկերութեան կեանքի բարեկարգման շարժու-  
մի մէջ: «Կրօնի գերագոյն նշմարտութիւնն է վարիչ ոյ-  
ժը եւ հաստատուն ազդակը մեր բարոյական եւ հոգեւոր  
կարգին» ասել էր նա եւ ա'յդ նկատել առաջի'ն հիմնա-  
կան սկզբունք առողջ մի ընկերութեան ստեղծման հա-  
մար:

Մեր ամենից իմաստուն հայրապետներից Գարեգին  
Կաթողիկոս Յովսէփեանը պատգամում է թէ «Կրօնն է  
այն սրբազան աւագանը, որտեղից կեանքի աղբիւրներն  
են հոսում»:

Եւ որպէսզի այդ կրօնական առողջ եւ առողջարար  
սկզբունքները մեր կեանքի մէջ տեղ գտնեն եւ շօշափելի  
արտայայտութիւն ունենան՝ մենք պէտք է ոյժ տանք  
կրօնական-հոգեւոր դաստիարակութեան: Եկեղեցիներ-  
ում մատուցուած սուրբ պատարագներով, հոգին լիաց-  
նող եւ վերացնող արարողութիւններով, հաւատքի կեն-  
սատու սկզբունքները բացատրող եւ ժողովրդի համար  
հասկանալի եւ գրաւիչ ընծայող քարոզներով, դպրոց-  
ների մէջ ուսանողներին ջամբուած կրօնական դասա-  
ւանդութիւններով, հրապարակային դասախօսութիւն-  
ներով, ընտանեկան յարկերի տակ աղօթքի եւ բարե-  
պաշտական սովորութիւնների կիրարկումով, ժողովրդ-  
դական գրքոյկների հրատարակութեամբ եւ հաղորդակ-  
ցութեան արդի մեթոդների եւ տեխնիկական միջոց-  
ների գործադրութեամբ պէտք է որ մեր ժողովրդի բո-  
լոր զաւակները գտնան գիտակից կրօնական խորունկ  
եւ փրկարար ճշմարտութիւններին: Եւ սակայն, այս բո-  
լորը իրագործելու համար մենք պէ'տքն ունենք լաւ  
պատրաստուած հոգեւորական մշակների: Վերջին հաշ-  
ուով, մա'րդն է, հոգեկան բարձր ապրումներով օժտը-  
ւած, տեսիլքի տէր, նուիրումի կամք ունեցող մա'րդն  
է, որ կարող է անել այս բոլորը: Ինչպէս ասել ենք մեր

Թեմի Պատգամաւորական Ժողովի բացման խօսքում,  
«Մեր մեծագոյն կարիքն այսօր, Իրանա-Հնդկաստանի  
Թեմի սահմաններում, մարդո՛ւ կարիքն է: Մա՛րդն է,  
սիրելիք, պսակը Աստու ստեղծագործութեան: Մա՛րդն  
է լծակը տիեզերքին: Մա՛րդն է առանցքը կեանքին:  
Մա՛րդն է գերագոյն, անգերադանցելի հարստութիւնը  
մարդուն: Ի՛նչ քաղցր է, ի՛նչ սիրովիչ, ի՛նչ երջանկալի  
մի ծնողքի համար, տեսնել իրենց զաւակներին մեծա-  
ցած շնորհներով եւ յաջող՝ իրենց գործերի մէջ, երջա-  
նիկ՝ իրենց կեանքի մէջ:

«Միրելի՛ ժողովականներ, դուք էլ ընտանիքի հայր  
էք եւ ունէք զաւակներ: Ուրախանում էք կամ տխրում  
էք ձեր զաւակներով: Նրա՛նք են ձեր մեծագոյն հարըս-  
տութիւնը. կարող են լինել եւ ձեր ահաւոր աղքատու-  
թիւնը:

«Ազգն էլ մի ընտանիք է: Երբ նա էլ ունի լա՛ւ զա-  
ւակներ, առողջ միտքի եւ հոգիի տէր հասարակական  
սպասարկուներ, հոգեւորական, կրթական, մշակութա-  
յին, ընկերային մարդերի մէջ, նա էլ առողջ է զգում ինք  
իրեն եւ երջանկօրէն ու ստեղծագործարար ապրում»:

Այն ինչ որ մեր Թեմի կարելիութեան սահմաննե-  
րում կարելի է կատարել, մենք երբեք չպիտի Թերանանք  
դա անելու: Եւ առաջին հերթին, յառաջիկայ տարւայ  
համար մեր բոլոր ջանքերն ի գործ դնելու ենք կազմա-  
կերպելու համար, հերթական, կանոնաւոր սիստեմով՝

ա- Դասընթացներ՝ երիտասարդների համար:

բ- Ժողովրդական լսարաններ՝ հաւատացեալների  
համար:

գ- Պարզ լեզուով հրատարակութիւններ՝ մեր ժո-  
ղովրդի բոլոր խաւերի համար:

Մի խօսքով՝ կրօնը պէտք է կեա՛նք դառնայ, որով-  
հետեւ կրօնները աշխարհում պարզ ու սոսկ զաղափա-

րարանութիւններ չեն, այլ կեանքի՛, ապրումի՛ եղա-  
նակներ: Քրիստոս Ինքն էր որ ասաց. «Ես եկայ, որպէս-  
զի կեանք ունեմաք, եւ՝ առաւել կեանքը» (ՅՈՎ. Ա.  
ԻԵՏ. Ժ. 10), այսինքն՝ հոգեկան բարձր, վսեմ, վեհ  
ապրումներով լի կեանքը: Դարձեալ Ինքն էր, որ ասաց.  
«Ես եմ ճանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքը»  
(ՅՈՎ. Ա. ԻԵՏ. ԺԴ. 6): Եւ իր քարոզութիւններին ակ-  
նարկելով՝ Նա պատգամեց այսպէս «Այն խօսքը, որ Ես  
ձեզ ասացի, հոգի է և՛ կեա՛նք» (ՅՈՎ. Ա. ԻԵՏ. Զ. 64):

Ապրենք ուրեմն ա՛յդ կեանքը: Եւ լաւ ապրելու հա-  
մար՝ սովորենք այդ կեանքի սկզբունքները: Ապրելով  
միայն կարելի է հասկանալ եւ վայելել նրա բարիքները,  
այն անխոխարինելի երջանկութիւնը, որ գերագոյն հա-  
րըստութիւնն է մարդուն: Ապրելով միայն կարող ենք  
ըմբռնել նրա քաղցրութիւնը:

«Ճաշակեցէ՛ք եւ տեսէ՛ք, զի քաղցր է...»:

Բ.

ՈՅԺ ՏԱԼ ՄԵՐ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ-ԸՆԿԵՐԱՅԻՆ  
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Իրանեան հայրենիքը, որտեղ ծնուել ենք եւ ապրում ենք այսքան երկար ժամանակներէց սկսեալ, օրից օր յառաջանում է դէպի քաղաքացիական, ընկերային կեանքի նոր հորիզոններ: Իրանեան կայսրութեան 2500-ամեակի տօնակատարութիւնը վստահաբար պիտի լինի մի նո՛ր հանդրուան դէպի աւելի լուսաւորեալ եւ գիտակից ընկերութեան վիճակ, որ արդի յառաջացեալ ազգերի ամենէն յատկանշական եւ դեղեցիկ երեւոյթն է:

Ամէն ազգի մէջ մի դաւակ պարտաւոր է գիտակցօրէն եւ պատասխանատուութեան զգացումով մասնակցել ազգային կեանքին: Մի ազգ այնքան առողջ կը լինի որքան այդ ազգի դաւակները շաղախուած լինեն ազգի կառուցուածքին մէջ եւ իրենց ամբողջական մասնակցութիւնը բերեն ազգի կեանքին: Ինչպէս մի շէնք, որ տոկուն կը լինի այնքան որքան բաղկացուցիչ քարերը իրար են զօղուած եւ բոլորը միասին քով-քովի ամուր կապուած լինելով՝ ապահովում են այդ շէնքի տոկունութիւնը, անսասանելիութիւնը:

Որպէս հաւատարիմ եւ նուիրեալ քաղաքացիներ Իրանեան Հայրենիքի, մենք պարտաւոր ենք աւելի մօտէն, աւելի սերտօրէն մասնակցել Իրանեան Հայրենիքի կեանքի բոլո՛ր յառաջադէմ շարժումներին: Քաղաքա-

ցիական առողջ գիտակցութեամբ տողորուած՝ մեր նոր սերունդը մանաւանդ, պէտք է լիովին իր մասնակցութիւնը բերի այս երկրի անտեսական, ճարտարարուեստական, ընկերային, մշակութային կեանքին, քաջատեղեակ լինելով նորին Վեհափառութեան Շահնշահ Արիամեհի ժողովրդանուէր եւ յառաջադէմ բոլոր ծրագիրներին եւ հեռանկարներին, եւ գործնապէս մասնակցելով այն բոլոր ջանքերին, որոնք թափում են ի խնդիր նրանց իրականացման եւ արդիւնաւորման:

Արդի կեանքի հետ քայլ պահելը, սակայն, չպիտի շփոթել այն ծայրայեղական, անիմաստ եւ վնասարեւ երեւոյթների հետ, որոնք Արեւմուտքից խուժում են դէպի Արեւելք հազարումի տարօրինակ անուններով հիփփիական, պիթրլիական եւ այլ խժալուր եւ անախորժ անուններով եւ անճոռնի ու սնտախ ձեւերով եւ ծովու փրփուրի նմանող երեւոյթներով: Այդ չէ իսկական արդիականութիւնը: Նման շարժումներ փրփուրի կեանք ունեն: Դրանք չեն որ մարդկային քաղաքակրթութեան նպաստ կը բերեն: Մասնաւորաբար մեր երիտասարդութիւնը պէտք է ունենայ սեպհական կեցուածք, ընտրելու ճաշակ, որպէսզի կարենայ արդի աշխարհի արդիական շարժումների մէջ իրարից յստակօրէն ջոկել ջուրն ու փրփուրը, ցորենն ու յարդը, վաւերականն ու կեղծը, արժէքաւորն ու անարժէքը: Մենք չպէտք է զոհ գնանք արտաքին, նորութարեր երեւցող ամէն շարժումի եւ երեւոյթի: Մենք պէտք է գիտենանք արդի աշխարհի նորանոր նուաճումներից, շարժումներից, երեւոյթներից ընտրել այն ինչ որ մնայուն արժէք ունի եւ ներդաշնակուած է Իրանեան եւ Հայկական հարազատ աւանդութիւններին եւ կարող են նպաստ բերել նրանց զարգացումին:

Ընկերային-քաղաքացիական դաստիարակութեան յա-

Ջող իրականացմանը համար, մենք պէտք ունենք կազմակերպելու երիտասարդական միութիւններ, հաւաքավայրեր, որոնց նպատակը պէտք է լինի գիտակից կեցողածքի, սեպհական մօտեցումի ազգային առողջ ոգիի մշակումը: Մարզական, սկսուտական, պատանեկան, միութիւններին առաւել չափով զօրավիգ պէտք է կանգնել եւ առիթ ու միջոց ստեղծել որ նրանք բարգաւաճեն նոր անդամներ արձանագրելով եւ նորանոր ու առաւել խանդավառ գործունէութեան լծուելով: Դրանով միայն կարելի է առաջն առնել այն ընկերային չարիքներին, որոնք ոչ միայն խռովում են մեր կեանքը, այլ եւ արգելք են հանդիսանում մեր յառաջադիմութեանը:

Երիտասարդութիւնը մարդկային կեանքի գարո՛ւնն է, ասուել է յաճախ: Եւ մենք լաւ պիտի իմանանք ինչպէս ասել է աշխարհի իմաստուններից մէկը. «Եթէ ծանր գարնանը չի ծաղկել՝ գուր է նրանից աշնանը պտուղ սպասել...»:

9.

### ՈՅԺ ՏԱԼ ՄԵՐ ԴՊՐՈՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ

Դպրոցը դարբնո՛ցն է մարդկութեան: Մեր հայ ժողովուրդը դարերից ի վեր այնքան խորը ձեւով ըմբռնել է արժէքը այս ճշմարտութեան, որ դպրոցը նկատել է եկեղեցու չափ նուիրական, եւ փաստն այն է, որ Հայկական դպրոցները միշտ եղել են Հայ եկեղեցուն դրացի, եղբոր ու քրոջ նման սերտ, մորթի եւ նրա զոյնի նման իրարից անբաժան:

Հայոց վանքերը աղօթքի տուն լինելու հետ միասին եղել են նաեւ դպրանոցներ, միտքի դարգացման վառ օճախներ: Հէնց մեր Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքը իր հիմնադրութեան օրից եղել է միաժամանակ դրարեվանք, այսինքն դպրութեան, գիտութեան, լոյսի կենտրոն:

Վանական շրջապատից դուրս, եկեղեցիների շրջաբակում, 19-րդ դարից սկսած դպրոցներ են բացուել Նոր-Ջուղայում: Այսպէս, Ս. Ստեփանոս եկեղեցու գաւթում դպրոց է բացուել 1833 թուին, որտեղ դասաւանդել է հոշակաւոր դրագէտ Մեսրոպը Թաղիադեանցը: Նոյն դարում, Ս. Աստուածածին, Ս. Մինաս եկեղեցիների բակերում դպրոցներ են հաստատուել, որոնք գոյատեւել են երեսուն-քառասուն տարիներ: Ի վերջոյ, եղել են Կատարիների, Քանանեան դպրոցները եւ մանաւանդ Ազգային Կենտրոնականը, որ մինչեւ այսօր էլ

չարունակում է իր բազմարդիւն ծառայութիւնները մատուցել Հայ ժողովրդին:

Սերունդներ են կազմաւորուել միտքի այս օճախներում եւ մինչեւ այսօր էլ նոր սերունդը այստեղ է թրքուում որպէս մարդ, որպէս Իրանցի եւ Հայ: Ու ես մի պահ երեւակայում եմ թէ ինչ վիճակ կ'ունենար մեր ժողովուրդը եթէ չլինէին այս միտքի օճախները, նկարագրի այս դարձնոցները: Յետադիմութեան խաւարի մէջ կորած եւ կուրացած մի զանգուած կը լինէինք անպայման:

Հայկական այս վարժարաններից դուրս եկած սերունդը ոչ միայն Նոր-Ջուղայում, այլև մինչև Մայրագոյն արեւելքի երկրներում գործօն դեր ունեցան թէ՛ առեւտրական, թէ՛ ճարտարարուեստական եւ թէ՛ ընկերային մարզերում: Ոչ միայն Նոր-Ջուղայից այլև Չրհարմահալի եւ Փերիոյ գիւղերից ուսումնատենչ Հայ ժողովրդի զաւակները ի՛նչ աննկարագրելի դժուարութիւններով եւ ի՛նչ աներեւակայելի դոհողութիւններով, եւ այս բոլորի միջից յայտնարեւոտղ ի՛նչ հերոսական ճիգերով գնացին մինչեւ Հնդկաստան, Կալիֆայի Մարդասիրական Ճեմարանը եւ բարձր կրթութեան տիրացած՝ վերադարձան Պարսկաստան եւ ծառայեցին այս երկրի յառաջադիմութեան գործին:

Հոգեկան անասման բաւարարութիւն զգացի ես երբ անցեալ Մայիսին, հովուական այցելութեամբ գրնացել էի Խուզիստանի շրջանը, և բոլոր կողմերից լսեցի այն դրուատալից խօսքերը, բարձր գնահատանքի արտայայտութիւնները, մասնաւորաբար Նաւթային Ազգային Ընկերութեան Իրանցի ղեկավար դէմքերից, որոնք անկեղծօրէն եւ անվերապահօրէն վկայում էին թէ Հայ պաշտօնեաները մեծապէս օգտակար դեր էին կատարել, մասնաւորաբար Ընկերութեան գործունէու-

թեան առաջին շրջաններում: Արագանում կամ Խորրամչահրում, Ահաղում կամ Անդիմեշկում, Մասջէդ-Սուլէյմանում կամ Աղաջարիում ինչպէս նաեւ Շիրաղում, ես ամէն տեղ տեսայ Հայ ժողովրդի զաւակները Իրանի ճարտարարուեստական ծառայութեան լաւագոյն դիրքերում: Այդ բոլորի արմատը, մեկնակէտը դպրոցն է:

Հայ ժողովրդի այս նոյն ուսումնաճարաւ ոգին եւ իմացապաշտ հասկացողութիւնն է, որ այժմ սքանչելի կերպով արտայայտում է մեր քոյր եւ աւելի ընդարձակ Թեմի՝ Թեհրանի մէջ, ուր նոր դպրոցներ են բացում, թէ՛ անհատական բարերարութիւնների եւ թէ՛ հաւաքական ճիգերի շնորհիւ: Որովհետեւ, Հայ ժողովուրդը հաւատում է, որ դպրոցով է թաքնուած յառաջադիմութեան գաղտնի բանալին:

Մենք խորապէս երախտապարտ դգալու ենք մենք մեզ հանդէպ Իրանի մեր լուսամիտ Վեհապետին՝ Շահնշահ Արիամհէրին, որ 2500-ամեակի տօնակատարութեանց այս շքեղաշուք առիթով, արտաքին փայլից եւ վաղանցուկ շքեղութիւններից աւելի, Իրանեան Հայրենիքի յառաջադիմութեան ի խնդիր՝ կոչ ուղղեց ժողովրդին 2500 դպրոցներ բանալու այն գիւղական վայրերում, որտեղ ամենէն աւելի խորը կարիք է զգացւում ուսումնական զարգացման: Սքանչելի՛ զաղափար, որին սիրայօժար եւ խանդավառօրէն ընդառաջեց Իրանի ժողովուրդը մեծապէս հրճուեցնելով սիրտը մեր սիրեցեալ Վեհապետին: Ես յիշում եմ թէ ի՛նչ գոհունակութեամբ Իրանա-Հնդկաստանի Թեմի մեր ժողովուրդը, իր Թեմական-Ազգային ներկայացուցիչների միջոցով իր սրտագեղ ուրախութիւնն յայտնեց երբ Թեմիս Պատգամաւորական Ժողովը յանուն մեր ժողովուրդին՝ երկու դպրոցների կառուցման յատուկ ծախսերը նուիրեց Իրանեան պատկան իշխանութեան:

Դարձեալ, բարձր գնահատանքով եւ ողջունում եմ մեր թեմի կողմից Իրանի Կայսրութեան 2500-ամեակի առթիւ նորակառոյց մանկապարտէզը Նոր-Ջուղայում, որ արդիական բոլոր պայմաններով եւ միջոցներով օժտուած մի շէնք է եւ որի բացումը կատարելու ենք 2500-ամեակի տօնակատարութեանց շաբաթւայ ընթացքում:

Նոյն ուսումնալաւ հոգու պայծառ վկայութիւն:

Այս բոլորը դրական եւ գեղեցիկ երեւոյթներ են անշուշտ: Սրանցով կարելի է, եւ պէ՛տք է հրճուել: Բայց դէպի առաւել յառաջադիմութիւն միշտ ձգտող մի ժողովրդի համար սրանք բաւարար չեն, մանաւանդ 2500-ամեակի տօնակատարութեանց այս բարեբաստիկ առիթով, որ ինքնին լինելու է մի նշանակալից հանգրուան Իրանի պատմութեան մէջ որպէս նոր ու աւելի փառաւոր նուաճումների:

Լարալիսեան ճշմարտութիւն է ասել, որ դպրոցը շէնք չէ՛: Դպրոցը իմացական, հոգեկան, բարոյական, ընկերային մի շարունակական գործունէութիւն է, որը մարդո՛վ իրագործւում է: Այս պարագայում, այդ մարդու անունն է Ուսուցիչ: Տարակոյս չկայ, որ ունենք նըւերեալ ուսուցիչներ, որոնք տալիս են իրենց գերագոյնը: Բայց կեանքը լինելով միշտ զարգացում, մանաւանդ 20-րդ դարում՝ արա՛գ զարգացում, ուսուցիչն էլ իր կոչումի կիրարկութեան մէջ զարգանում է արդի հոգեբանութեան, ընկերաբանութեան, մանկավարժութեան նորայայտ տուեալներով օժտուած եւ օգտուելով հաղորդակցութեան արդի միջոցներից:

Ահա թէ ինչու հրամայական պահանջ է դարձել ուսուցչի տեւական վերանորոգման, վերաթարմացումի կարիքը, ինչ որ Եւրոպայում կամ այլ աւելի զարգացեալ երկրներում գոհացւում է յատուկ մնայուն Մանկա-

վարժական Հիմնարկների, Ուսուցչանոցների եւ այդ ուղղութեամբ կազմակերպուած պարբերական դասընթացքների շնորհիւ:

Այս գիտակցութիւնից առաջնորդուած՝ մենք եւս որոշել ենք, Նոր-Ջուղայի Հայոց Դպրոցների Հոգաբարձութեան հետ համախորհուրդ եւ նրա կազմակերպութեամբ, դասընթացքների մի շարք հաստատել Ս. Ամենափրկիչ վանքում, որպէսզի մեր ուսուցիչներն եւ ուսուցչուհիները ինչպէս եւ զարգացման փափաք ունեցող երիտասարդները առիթ ունենան զարգացնելու թէ՛ իրենց դասաւանդած նիւթերը եւ թէ՛ դասաւանդումի մեթոդները: Յոյս ունենք, որ սրանով մեր դպրոցները առաւել եւս կ'օգտուեն եւ մեր սիրելի աշակերտները աւելի կը կապուեն իրենց դասերին եւ նրանց միջոցով տրուած նիւթերին եւ փոխանցուած արժէքներին:

Ի վերջոյ, չպիտի մոռանալ, որ դպրոցը մի օճախ է եւ նրա կրակը պիտի միշտ հրահրել, որպէսզի չնուազի ջերմութիւնը...: Ինչպէս դաստիարակ-բանաստեղծն ասում է դպրոցի համար, այնպիսի խորաթափանց իմացումով եւ մտազբաւ պատկերով.—

«Տանա՛ր հրաշագործ, վե՛մ ձուլարան  
Ուր կապարն յոսկի, նիւթն յոգի դառնան,  
Եւ այն ատեն  
«Եւ դու կերտես դու գապագայ  
Մանկանց սիրելի, ազգաց պաշտելի  
Քեզ փա՛նք, ով դպրոց,  
Լուսոյ վառարան»:

Այսպիսի խորունկ ու վսեմ հասկացողութեամբ մի գործօն մարդկային հաստատութիւն է դպրոցը եւ նա որ իր դպրոցական գաւալի համար ոչինչ կը խնայի՝ կեանքում ամէ՛ն ինչ կը շահի: Գիտենանք տալ եւ առատօրէն

տալ, մեր զաւակների դպրոցական կրթութեան համար: Մեր դպրոցները վերածենք չէն ու շինարար հաստատութիւնների, որովհետեւ ժողովրդական առաջն ասում է, դարաւոր փորձառութեան իմաստութեամբ:—

«Նա որ մի դպրոց է բացում  
Մի բանտ է փակում...»:

Իսկ մենք չմոռանանք որ դարգացեալ ազգերն այսօր իրենց բանտերը վերածում են կրթարանների...:

Վա՛ռ պահենք օճախը մեր դպրոցների, որպէսզի տաք մնան մեր հողիները եւ երջանիկ լինի մեր կեանքը մեր զաւակների երջանկութեան ապահովութեամբը:

Գ.

### ՈՅԺ ՏԱԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻՆ

Ժողովուրդների պատմութեան նժարում ամենէն աւելի ծանր կշռող եւ մնայուն արժէք ներկայացնող երևոյթները մշակութային նուաճումներն են առհասարակ: Մշակոյթ բառն այստեղ մենք նկատի ունենք որպէս հոգեկան բարձր ապրումների արտայայտութիւն, գրականութեան, արուեստի եւ այլ յարակից միջոցներով:

Ես այնպէս եմ տեսնում, որ Իրանեան կայսրութեան 2500-ամեակի տօնակատարութիւնը եթէ մի կողմից զարկ է տալու այս երկրի արդիականացման շարժումին, միւս կողմից, առիթ է դառնալու Իրանեան դարաւոր մշակոյթը աւելի պայծառ լոյսին բերելու եւ Իրանցի ժողովրդին եւ համայն մարդկութեան ծանօթացնելու: Ինչպէս Նորին Վեհափառութիւն կայսրը, Շահնշահ Արիամէհը Ինք ասել է, Իրանն այժմ «Իրար միաձուլում է, նոր եւ ներդաշնակ ձեւով, մեր հնութիւնն ու արդիականութիւնը \*):

Մեծն Կիւրոսից ասդին հաղարաւոր բանակներ եկել են ու անցել, բայց մնացել է Պերսեպոլիսը, իր գեղաքանդակ յուշարձաններով, որոնք վկայում են անցնող գնացողի մնայուն թողօնի մասին, այսինքն մշակութա-


\*) «Առաքելութիւն իմ երկրի համար», էջ 28:

յին ստեղծագործութեանց մասին: Մեր արդի հայ ամենէն մեծ գրողներից Յակոբ Օշականն ասում է. «Բաղաքը գնում է, արձանն է մնում»:

Մեր հայ ժողովուրդն էլ դարերի ընթացքում, կերտել է մի մշակոյթ, որ հազարամեակների վրայ ծաւալող մի հսկայ ստեղծագործութիւն է, որ այնքան երկար ժամանակներից ի վեր պեղում ենք ու պեղում եւ դեռ այնքան պեղելի ենք գտնում...: Անհուն եւ անյատակ մի հանք է նա: Ճիշտ է ինչ որ ասուել է Հայաստանի մասին — «Բացօդեայ մի քանգարան»:

Մենք պատմութեան մէջ չենք ունեցել յաճախ մեծ ու երկար տեւող կայսրութիւն կամ թագաւորութիւն: Բայց ունեցել ենք միշտ մի տեսակ թագաւորութիւն, որ վեր է մնացել բոլոր թագաւորութիւնների կործանումից — դա մշակոյթի թագաւորութիւնն է եղել, առանց թագի, առանց դահի ու մականի, առանց զէնքի ու բանակի: Գիրի, գիրքի, արուեստի՝ ճարտարապետութեան, երաժշտութեան, նկարչութեան իշխանութեամբ եւ զօրութեամբ ապրող եւ չմեռնող ու չմեռնելիք թագաւորութիւն:

Ինչպէս Հայաստանում, նաեւ Հայաստանից դուրս, Սփիւռքի երկրներում, ուր ապրել է Հայը, դարձեալ եւ միշտ շարունակել է իր իւրայատուկ առաքելութիւնը — ծառայել մարդկային փաղափակրթութեանը, իր լուսման նետել մարդկային պատմութեան զանձանակին մէջ: Այս պատճառով, Անգլիոյ հռչականուն Վարչապետ Կրլատսթոնը (Gladstone), Օսմանեան Թուրքիոյ մէջ հայ ժողովրդի կրած ջարդերին դէմ բողոքելով եւ այդ կոտորածների համար ասելով, որ «նրանց տարողութիւնը եւ վայրագութիւնը իրենց նմանը չունեն արդի պատմութեան մէջ», կոչ էր անում մարդկային խղճմտանքին ընդվզելու համար այս աննախընթաց ցեղաս-



Ս. Թաղի վանքը


պանութեան դէմ, եւ յայտարարում էր. «ԾԱՌԱՅԵԼ  
ՀԱՅԱՍՏԱՆԻՆ՝ ՆՇԱՆՍԿՈՒՄ Է ԾԱՌԱՅԵԼ ՔԱՂԱՔԱ-  
ԿԸՐԹՈՒԹԵԱՆԸ» (TO SERVE ARMENIA IS TO  
SERVE CIVILIZATION):

Ես կարիք չեմ զգում բացատրելու ձեզի թէ ի՞նչ  
կ'արժէ մշակոյթը, որ մի տեսակ հայրենիք է մի ազգի  
համար: Պարսկահայութիւնը, ընդհանրապէս, իսկ Նոր-  
Ջուղայի Հայութիւնը, մասնաւորապէս, քաջատեղեակ  
է հայկական մշակոյթի արժէքին: Ս. Թադէի վանքը  
կամ Ս. Ստեփանոս Նախավկայի մենաստանը եւ կամ  
Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքը, Թանգարանը,  
ձեռագիրները, եկեղեցիները պերճախօս յուշարարներն  
են հայ մշակոյթի արժէքի զեղեցկութեան, դրաւչու-  
թեան եւ անկորնչելիութեան մասին: Բացէ՛ք ձեր հողի-  
ները եւ պիտի լսէք անպայման Ս. Թադէի հաղարամեայ  
քարերից, Ս. Ստեփանոսի նրբարուեստ քանդակներից  
եւ խաչքարերից, Ս. Բեթղեհէմ եկեղեցու մագաղաթա-  
նման նկարներից, Ս. Ամենափրկչի երփներանգ մանրա-  
նկարներից արձակուող դարաշունչ ձայներ, որոնք զօ-  
ղանջում են այնպէս ինչպէս կը զօղանջեն «Անլուելի գան-  
գախառուն»ները այս աշխարհում:

Ով նայում է այդ հոյակերտ կոթողներին, — եւ ով ի-  
րեն մա՛րդ է զգում, — չի՛ կարող չհաղորդուել այնպիսի  
արժէքներից, որոնք միշտ բաշխում են պատարագի  
նշխարքի պէս եւ մնում անսպառ եւ անսպառելի...:

Ով նայում է Ս. Թադէի Մասիսանման զոյգ դրժ-  
բէթներին, — եւ ով իրեն մա՛րդ է զգում, — չի՛ կարող վեր  
չբարձրանալ հողից ու հողեղէնից եւ չմեծանալ հողով:

Ով նայում է լեռի լեռների անապատանման անհու-  
նութեանց մէջ ովասիսի նման ծաղկած Ս. Ստեփանոս  
Նախավկայի բազմադոյն ու սրբատաշ քարերի վրայ  
հիւսուած գեղաքանդակ ստեղծագործութիւններին, — եւ



Ս. Ստեփանոս Նախավկայի  
Խաչքարերով ծաղկած մէկ պատը

ով իրեն մա՛րդ է զգում—, չի՛ կարող չվեհանալ եւ չազնուանալ սրտով:

Ով նայում է Ս. Ամենափրկիչ վանքի գեղանկարեալ ձեռագրերի բազմերանգ ու նրբագիծ մանրանկարներին,—եւ ով իրեն մա՛րդ է զգում—, չի՛ կարող չհարստանալ եւ չգեղեցկանալ մտքով:

Բայց հէնց խնդիրն այն է, որ պէ՛տք է նայե՛լ սովորել: Ո՛չ մտեղէն անջերոյ, այլ այն «վեցերորդ զգայարանք»-ով, որ անտեսանելի եւ անսահմանելի մի գաղտնի ոյժ է մարդու մէջ եւ առանց որի՝ մարդը կարծես մարդից ցած մի էակ է...: Պէ՛տք է նայե՛լ սովորել, պայծա՛ռ մտքով, մշակուա՛ծ ճաշակով, մաքո՛ւր սրտով, բա՛րձր հասկացողութեանց եւ վայելքների առակ հոգով: Պէ՛տք է նայե՛լ սովորել, պատմական լայն հորիզոնով, գիտութեան ընդարձակ շրջագծով, ըմբռնումի խոր տարողութեամբ:

Այնպէս ինչպէս դարեր առաջ Հայաստան աշխարհ ճամբորդած Պարսիկ բանաստեղծը, Հաքիմ Նիզարին, (1247–1320 թթ.) քար ու հողից, ջուր ու գետից, քաղաքից ու գիւղից անդին եւ վեր՝ կարողացաւ այնքան յստակ եւ խոր նայել որ յաջողեց հարազատ կերպով տեսնել մեր արուեստի կոթողները եւ նրանց մէջ եւ նրանցով անմահացած արժէքները.

«Հոյակապ քաղաքներն հայկական  
Աչքերիս առջեւ են շարունակ.  
Թառել են բարձրաբերձ ժայռերին  
Եւ գետեր նրանց շուրջ խոր, անտակ:  
Պատերն ու սիւները շէնքերի  
Ողջ տաշուած քարերից են կերտուած  
Ժայռակերտ պարիսպներն սլացիկ  
Վեհարուեստ զարդերով են պատուած,

Եւ այնտեղ հիացֆի արժանի  
Փառապանծ տաճարներ են կանգնած» \*):


Եւ դարձեալ այնպէս ինչպէս, աշխարհի չորս ծագերից Իսֆահան եկող եւ Նոր-Ջուղայի վանքն ու Թանգարանն այցելող բազմազգի անձեր, արքաներ, թագուհիներ, իշխաններ, իշխանուհիներ, վարչապետներ, նախարարներ, գեսպաններ, հոգեւորականներ, գիտնականներ, արուեստագէտներ, մտաւորականներ, դասախօսներ եւ պարզ մարդիկ այնպիսի խոր տպաւորութիւն են կրել որ մեկնել են թուղթին յանձնելով յուզիչ եւ խորիմաստ վկայութիւններ «գարմանալի», «հրաշալի», «անսպասելի», «սրտագրաւ», «անմոռանալի» եւ այլ հազարումի բառերով, հիացիկ արտայայտութիւններով եւ խոհուն տողերով մեր ժողովրդի եւ Պարսկաստանի մասին:

Այո՛, պէտք է նայե՛լ սովորել...:

Մասնաւորաբար մեր նոր սերունդը, գիտութեամբ եւ զարգացումով յառաջացած, պէտք ունեն, եւ պա՛րտքը, նայելու այդ հրաշակերտութիւններին եւ լեցուելու նրանց հրաշակերպող զօրութեամբը, հայացուցիչ ներգործութեամբը: Հայութեան «Մկրտութեան Աւագան»-ներն են նրանք, որոնց մէջ նայել գիտցող հոգին կը մըկըրտուի եւ ձայնը երկնքից կը բարբառի.— Դա՛ է Հայը, դա՛ է հայկականը, դա՛ է հայութիւնը, նայե՛ք դրանց: Որովհետեւ դրանցով հայ մարդը փաստեց իր հայատիպ մարդութիւնը աշխարհում:

Եւ երբ ինքն իրրեւ մարդ, իր Ֆիզիքական գոյու-

\*) Մէջբերուած Բ. Լ. Չուգասեանի կողմից. տե՛ս «Հայ-Իրանական գրական աննշութիւններ» Ե.-ԺԸ. դարեր, էջ 43, Երեւան, 1969:




Ս. Ստեփանոս Նախավկայի  
 քանդակների մի անկիւն

թեամբը, միս ու ոսկորովը, գնաց հողին՝ հայութիւնը  
 մնաց կեանքի՛ն: Անա՛նց կեանքին: Յաւերթութեան:

Մեզ համար Իրանեան Կայսրութեան 2500-ամեակը  
 պէտք է լինի մի բացառիկ առիթ, որ Շահնշահ Արիա-  
 մեհրի դժած լուսեղէն ուղիով մենք ընթանանք եւ վե-  
 րըստին արժեւորենք մեր կեանքում այն ինչ որ արժէք է  
 ունեցել դարերի կեանքում: Ճանաչե՛նք, սիրե՛նք, վայե՛-  
 լե՛նք մշակութային, գեղարուեստական արժէքները Ի-  
 րանեան հայրենիքի դարաւոր նուաճումներին եւ սրանց  
 շարքին, Իրանահայ մեր հոգեկան եւ իմացական ժա-  
 ոանդութեան:

Ահա թէ ինչու մեզ համար շատ մեծ նշանակութիւն  
 ունի նորակառոյց եւ շքեղակերտ ու արդիական մեր  
 Թանգարանը Ն. Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքում: Նա



Նոր - Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի  
 նորակառոյց քանդարանը

գեղարուեստական առարկաների պահարան կամ շտեմարան չէ: Նա մի դպրոց է: Բայց... նրանց համար ուղքեր նայել գիտեն: Իսկ նրանք ուղքեր նայել չգիտեն, նրանց համար նա մի մանկապարտէզ է, ուր նայել կը սովորեն եթէ մտնեն եւ ուզեն «աշակերտիլ»...:

Եւ որպէսզի գեղարուեստական այդ արժէքները լեզու առնեն եւ բարբառեն, անհրաժեշտ է գիտական-գեղարուեստական լուրջ եւ գեղատիպ հրատարակութիւններ կատարել, որպէսզի լոյսը սփռուի բոլոր նրանց, որոնք լոյս կը փնտռեն, «աւելի՛ լոյս» ինչպէս բացազանչում էր Կէօթէն: Եւ ո՞վ մա՛րդ է որ չի փնտռի լոյսը...:

Ո՞վ սիրելիք, գաւազունք լուսապա՛շտ ժողովրդի, եղէք «լուսո՛յ որդիք» լուսածնունդ շառաւիղք Լուսաւորիչ Հայրապետին, լուսաստեղծ Մեսրոպայ Վարդապետին, լուսերգակ Շնորհալի բանաստեղծին, լուսապսակ նահատակներին, լուսածորան վարդապետներին: Երգեցէք միաբերան, միահամուռ, համանուագ ձայնիւ

«Առաւօտ լուսոյ  
Արեգակն արդար  
Առ իս լո՛յս ծագեա՛»:

Ներսէս Շնորհալու բանաստեղծական եւ երաժշտական քնարի վրայ այսպէս երգեց հայ հոգին՝ լուսապարար բայց միշտ լուսակարօտ: Լո՛յսը, «աւելի լոյսը» միշտ որոնող հայ ժողովուրդը որքան լոյս ունեցաւ եւ որքան լոյս ծնցուց իր ծոցից, այնքան եւ աւելի դարձաւ կարօտ լոյսի եւ այդ կարօտութիւնն եղաւ մեծութեան եւ անմահութեան իր գաղտնի ճամբան:

Հայոց լուսերգակ եւ լոյսին համար նահատակ հայոց բանաստեղծը՝ Դանիէլ Վարուժան իր ժողովրդի ամենէն խորունկ իղձին արգագանգ էր տալիս երբ գրում էր.

«Սիրտս սափորն է դատարկ  
Ու ես կ'երթամ դէպի աղբի՛ւրը լոյսին...»:

Հետեւաբար, ո՞վ նորարողը ծիւեր հայ ժողովրդի, մատղա՛շ, դեռափթիթ պատանիք եւ պատանուհիք, կայտառ եւ առոյգ երիտասարդք եւ երիտասարդուհիք, որքան լոյս շահէք այս աշխարհում, է՛լ աւելի լոյս փնտռեցէք, եթէ որոնում էք իսկակա՛ն երջանկութիւնը, անսպառելի եւ անվախճան կեանքը: Հայոց մշակոյթի լուսափիւռ կոթողներից լո՛յս ըմպեցէք, Իրանեան մշակոյթի հազարամեայ յուշարձաններից լո՛յս քաղեցէք, աշխարհի լուսառատ մշակոյթներից լո՛յս հաւաքեցէք, եւ նո՛ր ճրագ վառեցէք Հայ ժողովրդի մշակոյթի տաճարում:

Թող այս լինի ձե՛ր լու՛ման, մասնաւորաբար 2500-ամեակի այս օրհնարեր առիթով: Լիարուռն եւ սրտով բերէք եւ մատուցէք ձե՛ր նպաստը մշակութային յառաջադիմութեան բազմարժէք գործին: Հերթը ձե՛րն է այսօր: Դո՛ւք էլ անցէք պատմութեան դանձանակի առջեւից: Դրէ՛ք դանձանակին մէջ այն ինչ որ ազնուազոյնն է ձեր հողու մէջ:

\* \* \*

Ես աւարտեցի իմ խօսքը ուղղուած մեր սիրեցեալ ժողովրդին: Ասացի այն ինչ բխեց իմ մտքիցս և սրտիցս, 2500-ամեակի տօնակատարութեան նախօրեակին: Ի խորոց սրտի ցանկանում եմ որ ուշի ուշով, լրջախոհութեամբ, սեպհական խորհրդածութեամբ ընթերցէք այս խօսքերը եւ իւրաքանչիւրը ձեզանից մտածի թէ ի՞նչ կարող է ի՛նք անել, իր համեստ չափով, իրեն յատուկ ձեւով, որպէսզի առաւել ծագիլի, առատօրէն պողարերի մեր կեանքն Իրանում: Ամէն ոք անելիք ունի: Չմոռանանք երբեք որ, ինչպէս ասում է Գարեգին Կաթողիկոս

Յովսէփեանը. «Կենդանաբար աղբիւրներն ու կարկաչուն վտակները, գետակներն ու գետերը, որոնք հոսում են իրենց հովիտներով, եւ առատութիւն ու կենդանութիւն պարգեւում իրենց ամերիկն, կաթիլներից են բաղկացած»...:

Մարդկային ու ազգային կեանքն էլ մի հոսանք է, որ անցնում է այս անցաւոր աշխարհով եւ դնում դէպի անանց աշխարհ, դէպի ծով-յաւերթութիւն: Վա՛յ այն ազգին, որի գետի ջուրը պակասի, նօսրանայ կամ ցամաքի: Դեռ ծովը չհասած՝ նրա ճանապարհը կ'առաջնորդի դէպի այլ կողմ... դէպի գերեզման...: Մեր ժողովրդի գետի ջուրը հասել է ծով, բայց... ծովն էլ կը ցամաքի եթէ գետերը դադարեն հոսալուց, անձրեւները կանգ առնեն տեղալուց: Էականը ազգերի կեանքի մէջ, ջուրի հոսանքի մշտակարկաչ ընթացքն է: Իսկ աւելի էականը անձրեւի կաթիլների եւ աղբիւրների ուղիքերի համախմբումը, միատեղումը, որի շնորհիւ գետը կեանք է ստանում: Ազգի մէն մի անդամը մի կաթիլ է: Ոչ մի կաթիլ թող պակասի մեր ժողովրդի գետից: Դարերի ընթացքում անվերջ հալածանքներ ու ջարդեր ինչքա՛ն կաթիլներ ցամաքեցրին մեր գետից: Խաղաղութեան եւ ստեղծագործութեան, վերածնութեան եւ վերադարձօնքի այս նոր շրջանում, չլինի երբեք որ մե՛նք դադարենք կաթիլ լինելու մեր փառաւոր և անգերազանցելի պարտքից եւ պատուից: Մէն մի կաթիլ այսօր տասը կաթիլների արժէք ունի մեր ապագային համար:

Հետեւաբար, ամբողջ սրտով, համակ եռանդով եւ վճռակամ նուիրումով կատարենք մեր պարտքը Իրանեան Կայսրութեան 2500-ամեակի առթիւ, որպէսզի առաւել եւս շէննայ, զարգանայ Իրանեան Հայրենիքը եւ կարենանք վայելել աւելի երջանիկ օրեր բազմարդիւն եւ բազմարժէք նուաճումներով հարուստ, ի փառս անմա-

հական Իրանին եւ մեր անմահական Հայ ժողովրդին:

\* \* \*

Այս գերերջանիկ առիթով, ես ի խորոց սրտի պարտք եմ զգում աղօթել, որ Բարեաց Բաշխողն Ամենաբարին եւ Առատագութն Աստուած միշտ քաջառողջ պահի մեր ամենասիրելի Արքայից Արքային՝ Նորին Կայսերական Մեծափառութիւն Շահնշահ Արիամհէրին, Մոհամմադ Ռեզա Շահ Փահլաւին եւ նրան պարգեւի երկար, երջանկալից եւ բազմարեղուն դահակալութիւն: Թող իր արեւափառ դահակալութիւնը անսպառ բարեքների աղբիւր լինի Իրանեան Հայրենիքի համար: Խաղաղութեան, ազատութեան, բարօրութեան լոյսը երբեք չմարի այս օրհնեալ երկրում եւ ազնիւ ժողովրդի կեանքում:

Աղօթքի լեզու մեր դրարար ոսկեղնիկ բարչառով եւ մեր սրբազան հայրերի շարահիւսած շարականի բառերով աղօթում եմ.

«Թագաւոր փառաց Աստուած...»

Նորոգեա՛ գկենդանութիւն մերոյ քագաւորին»

Եւ այժմ եկէք, բոլորս միասին 12-րդ դարի Հայ աղօթասաց բանաստեղծ եւ Հայրապետ Ներսէս Շնորհալու բառերով միարեբան աղօթենք առ Աստուած մեր սիրեցեալ Վեհապետին համար.

«Աջ քո հովանի լիցի ի վերայ նորա, ի տուէ եւ ի գիշերի, ի նստել ի տան, ի գնալ ի նանապարհ, ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեսցի»:

Աղօթենք համայն Արքայական ընտանիքի անդամներին, Շնորհափայլ Կայսրուհի Փարահ Փահլաւի, շրնորհունակ Գահաժառանգ Իշխանին, եւ բոլոր անդամներին, որպէսզի իրենց նուիրումով համար առաւել շէնացնեն Իրանեան Հայրենիքը:

Աղօթենք Իրանեան Հայրենիքի կառավարութեան

պետ՝ Ն. Վսեմութիւն Վարչապետ Ամիր Արբաս Հովէյ-  
դայի, Նախարարական Կապմի, Մերակոյտի եւ Խորհրդարանի բոլոր անդամներին եւ բոլոր նրանց համար, որոնք պետական ծառայութեամբ զարգացնում են այս երկիրը խաղաղութեան, ազատութեան և բարօրութեան բարիքներով:

Աղօթենք Իսֆահանի, Փարսի եւ Խուզիստանի մեր սիրելի Նահանգապետներին համար, որոնց բարեացակամ եւ հողածու հովանաւորութեան տակ ապրում է Իրանահնդկաստանի Թեմի մեր ժողովուրդը, հարաւային Իրանում:

Թող Աստուած իրենց երջանիկ պաշտօնավարութիւն եւ առատաբեր արդիւնաւորութիւն պարգեւի:

Աղօթենք Իրանի ամբողջ ժողովրդի, նրա բոլոր խաւերի համար, հայցելով խաղաղութեան պարգեւիչ եւ կեանքի տուիչ Աստուծոյ, որ բոլորին անխտիր շնորհի բարօր կեանք, յառաջադիմութիւն եւ հոգեկան վերանորոգում, որպէսզի կարենան նոր ու աւելի փառաւոր նրա ծառայութեան զարգացնել այս երկիրը իր անցեալի ոգով եւ դարաւոր սկզբունքների անխախտ պահպանումով:

Աղօթենք, որ մեր հայ ժողովուրդն էլ, իր հայրերի օրինակով, եռանդուն եւ նուիրեալ ջանքերով, իր արժանի բաժինը բերի դէպի նորանոր բարձունքներ յառաջացող Իրանեան կեանքին:

Թող Աստուած օրհնի Իրանեան Կայսրութեան հիմնադրութեան 2500-ամեակի տօնակատարութիւնը, որպէսզի նա շքեղօրէն պսակի երկու հազար հինգ հարիւր տարիների փառքն Իրանի եւ ինք իր կարգին, դառնայ փառաւոր սկիզբ ու խոստմնալից մեկնակէտ, բանալով նոր հազարամեակների կերտումի համար մի լուսեղէն ճանապարհ Իրանի պատմութեան մէջ: